

Վ. ՄԱՅՍԻՄԵՆԿՈ

ՀԱԿՈՂԱՅԻՆ
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԽՄԲԱԿ

355.5

Մ-41

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1936

Վ. ՄԱՔՍԻՄԵՆԿՈ

2802-10

355.5
Կ 41

ՀԱԿՈԴԱՅԻՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԽՄԲԱԿ

ՁԵՌՆԱՐԿ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԽՄԲԱԿՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ
ՅԵՎ
ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

39065-
1009
4017
39065

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ



26 JUN 2013

42235

Վ. ՄԱՔՍԻՄԵՆԿՈՒ, Հակոբային ինքնապաշտպանության խմբակի Գիրքը լուս-
տարանում և ինքնապաշտպանության խմբակի աշխատանքը՝ բնակավայրերի
վրա ողբերգական հարձակման ժամանակ: Ձեռնարկը կառուցված է ինքնա-
պաշտպանության խմբակի պետերի և ջարձային կազմի մարտական պատրաս-
տության ձեռնարկի համեմատ:

Պատ. խմբագիր՝ Գրաբիս
Թարգմանիչ՝ Հ. Ալեքյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Զեմյան
Մեքագրիչ՝ Հ. Մանուկյան

Հրատարակ. 3543
Գլավիտ. Վ. 325
Պատվեր 1288
Տիրաժ 4000

Հանձնված է արագորության 26 նոյեմբ. 1935 թ.
Ստորագրված է տպագրության 19 դեկտ. 1935 թ.

Պետերաթի տպարան, Յերեվան. II Գնունի № 4

41666.68

«Ապագա ընդհարումների յեղբ կախ-
ված է, վաղ միայն նրանից, քե մեր սեփա-
կան ողային տորմիդը ինչպես կպատաս-
խանի ողային հակառակորդի հարվածնե-
րին այնպիսի նրանից, քե ինքը՝ բնակչությունը
ինչ չափով կազմակերպված կդիմադրի
ողային թշնամուն»:

Ռ. Պ. ԵՅԻԵՄԱՆ

Գ Լ Ո Ւ Խ I

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՂԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅԵՎ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ: Ընկ. Վորոշե-
լովը կուսակցության XVI համագումարում արտասանած իր ճա-
ռում աշպես բնութագրեց ողային հարձակման վտանգը:

«Բավական է մատնանշել, վոր ներկա ավիացիայի կազ-
մում կան ուժեղներ, վորոնք կարող են բարձրացնել
մինչև 12 տոնն ոգտակար բեռ, ել չենք խոսում մյուս հըս-
կայական կարևորության ցուցանիշների մասին, վորոնք
կտրականապես փոխել են պատերազմի այդ նոր միջոցի
պատկերը: Այդպիսի 10 ուժեղներին բաղկացած խմբակը
կարող է միաժամանակ թափել 7000 փուլ պայթուցիկ
նյութեր: Այդպիսի հարյուր սավառնակ կարող է ավերել
ժամանակակից մի մեծ քաղաք»:

Կապիտալիստական յերկրները մոլեգնորեն սպառազինվում
են, տենդորեն պատրաստվելով իրար միջև պատերազմի և առա-
ջին հերթին խորհրդային Միության դեմ հակահեղափոխական
պատերազմի համար: Իմպերիալիստներն իրենց սպառազինում-
ներում առանձնապես ուշադրություն են նվիրում ողային տոր-
միդի զարգացմանը, մասնավորապես ուժեղացնելով ավիացիայի
զարգացմանը, վորն առանձին յերկրներում կազմում է ամբողջ
ավիացիայի կազմի 50 տոկոսից ավելին:

Մենք կփորձենք համառոտակի տալ ավիացիայի տարրեր տեսակները և ողային հարձակման միջոցների բնութագիրը:

Ռմբակոծային ավիացիան, ինչպես իր անունն և ցույց տալիս, նշանակված է տարրեր ավերիչ ուժի և ծանրության ուժերի նետելու համար տարրեր բարձրություններից խիստ բազմատեսակ նշանների վրա. ինչպես՝ զորքերի խմբերի, յերկաթուղային կայարանների և կառուցվածքների, դործարանների, ազմական նշանակություն ունեցող պահեստների վրա և, ինչպես իմպերիալիստական պատերազմների փորձը ցույց տվեց, քաղաքական տնտեսական ու արդյունաբերական կենտրոնների վրա: Հեռավոր թռիչքների համար նշանակված բազմատեսակ ռադիոհաղորդման երկրամասերում թյունը հասնում է 10—20 տոննի: Սավառակների խոշոր չափերը, կառուցվածքի ծանրամեծությունը, մեծ քաշը սահմանափակում են նրանց առաստաղը (վերելքի բարձրությունը) մինչև 5000—6000 մետր: Այդ սավառակների արագությունը հասնում է 1 ժամում մինչև 230 կիլոմետրի: Ռմբակոծային ավիացիայի խնդիրն է՝ հարձակումներ կատարել թիկունքների վրա, ուստի սովորաբար նա զինվում է գնդացրերով՝ ողում կործանիչների դեմ կռվելու համար և ուժերերով՝ վերելքի շրջանում նշանները հարվածելու համար: Բացի դրանից, այդ սավառակները կարող են ունենալ հատուկ գործիքներ թունավորող նյութեր (թՆ) շաղ տալու համար:

Կործանիչ ավիացիան նշանակված է ողում հակառակորդի ավիացիայի դեմ ակտիվորեն կռվելու համար:

Կործանիչները լինում են միտեղանի և յերկտեղանի: Միտեղանին զինված է 2 կամ 4 զուգյալ (Спаренные) գնդացրերով, վորոնք անշարժ կերպով ամրացված են և կրակում են միայն՝ պտուտակի վրայով դեպի առաջ:

Յերկտեղանի կործանիչն ունի ավելի ուժեղ գնդացրային սպառազինում (մինչև 6 գնդացր)՝ նրանց դասավորությունը հնարավորություն է տալիս կրակ վարելու թե՛ դեպի առաջ, թե՛ յետ և թե՛ դեպի կողքերը: Յերկտեղանի կործանիչը նշանակված է՝ ուղեկցելու իր ռադակիրներին և հետախույզներին, յերբ ներանք թռչում են հակառակորդի դասավորման խորքը և կռվելու յերկրի տերիտորիան ներխուժած հակառակորդի սավառակների դեմ:

Ժամանակակից կործանիչի շարժման արագությունը հասնում է մեկ ժամում 275—325 կիլոմետրի:

Հետախույզական ավիացիան բաժանվում է յերկու յենթախմբի (նայած հետախույզություն կատարելու հեռավորությունը) — հեռակա և մերձակա: Հետախույզական սավառակի խնդիրն է, ինչպես նրա անունն և ցույց տալիս, — հետախույզությունը: Հեռակա հետախույզություն համար նշանակված է սպառազինություն մեջ գոյություն ունեցող բազմատեսակ հետախույզները, քանի վոր հարկադրված են ուժով անցնելու հակառակորդի կործանիչների միջով, այդ պատճառով նրանց սպառազինումը պետք է նման լինի ռադակոնիչների սպառազինությունը: Հետախույզների թռիչքի արագությունը հասնում է 200—275 կիլոմետրի մի ժամում:

Շտուրմային ավիացիան նշանակված է առանձնապես փոքր բարձրություններից (մինչև 500 մետր) մարտական գործողությունների համար, զլխավորապես հակառակորդի մոտակա թիկունքում կենդանի նշանների վրա մարտական գործողությունների համար:

«Շտուրմիչը» զինված է գնդացրերով (4—8), հատուկ հաստարանների վրա, կրակում են բոլոր կողմերի վրա:

Ավիացիայի շտուրմային գործողությունները հնարավոր են նույնպես խորը թիկունքում մարդկանց կուտակումները, կենդանիներին գնդակոծելու համար և մասնավորապես ողային հարձակման հետևանքները վերացնելու վրա աշխատող հակողային պաշտպանություն մասերը գնդակոծելու համար:

Գրոհի հաջողություն տարրերից մեկն է հանդիսանում նրա անսպասելիությունը: Այդ անսպասելիությունը ձեռք է բերվում աննկատելի մոտենալով նշանին՝ թագնված լեռան, անտառի յիտևում և այլն:

Շտուրմային ավիացիան հանկարծակի գրոհների ժամանակ գնդացրային կրակով և ռադակոնիչամբ բարոյական մեծ ազդեցություն է թողնում անպատրաստ զորքերի վրա:

ԱՎԻԱՅԻՈՆ ՌՈՒՄԲԵՐ: Ավիառումբերն ունեն կաթիլի ձև: Թռիչքի ժամանակ ուժերին կայունություն տալու համար նրա պոչի մասում ամրացնում են ստարիլիդատորը (պոչի հարմարանք է, վորը կանոնավորում է ռումբի թռիչքի ուղղությունը նրա ընկնելու ժամանակ):

Ռումբերն իրենց նշանակման համաձայն բաժանվում են՝ ֆուգասային ռումբերի — ծածկարաններն ու ամբությունները քանդելու համար, բեկորային ռումբերի — կենդանի նշանները

վրա գործողության համար. քիմիական բույսերը—գործերին ու
բնակավայրերը թույնավորող նյութերով վարակելու համար և հըր-
ձիգ բույսերը—բնակավայրերում հրդեհներ առաջացնելու համար:

Ֆուգասային բույսերը գործում են գլխավորապես պայթյուն-
ների արիքի ուժով: Այդ տեսակի բույսերն ունեն 50—2000 կի-
ոգրամ ծանրություն: Ռումբի այդ մեծությունը համեմատ
նրա ավերիչ ուժը տարածվում է 40—250 մետր տարածության
վրա բույսերի պայթման տեղից հաշված: Ֆուգասային բույսերի
ներթափանցելու խորությունը հողի գետնի մեջ հասնում է 1,5—8
մետր լայնության և 7—30 մետր տրամագծով ձազարի: 50—150
կիլոգրամ ծանրության բույսերի պայթման ուժը միանգամայն
բավական է ավերելու քաղաքային և արդյունաբերական տիպի
շենքեր ու կառուցվածքներ. ավելի ծանր բույսերն ունեն հա-
տուկ դեր, նրանք գլխավորապես ծառայում են ծովային նավե-
րի դեմ կռվելու համար և հատուկ կարևոր կառուցվածքներ քան-
դելու համար, ինչպես որինակ յերկաթուղային կամուրջներ և
այլն:

Բեկորային բույսերը բաց վայրում գտնվող կենդանի նը-
շաններին հարվածելու համար են (մարդ, ձի և այլն): Ռումբն
ընկնելու ժամանակ պայթում է հենց գետնի յերեսին, մանրվելով
մեծ քանակությամբ բեկորների, վորոնք բույսերի պայթման տե-
ղից թռչում են 20—150 մետր հեռավորության վրա, նայած
բույսին ինչ ուժ ունի: Այս տեսակի բույսեր քաղը լինում է 8—50
կիլոգր: Ամենից հաճախ գործադրում են 8—16 կիլոգր. քաշ
ունեցող բույսեր:

Հրձիգ բույսերը նշանակված են գործելու այնպիսի կե-
տերի վրա, վորանց շատ կա այրվող նյութեր, (փայտե շենքեր,
վառելանյութի պահեստներ, փայտագործական և փայտամշակման
ձեռնարկություններ և այլն): Այս տեսակի բույսերը ունի ֆոսֆոր-
կամ տերմիտ: Պայթյունի ժամանակ դոյանում է հրդեհի մոտ 15
րոպե վառվող մի ոջախ, մինչև 3000 աստիճան տաքությամբ: Նա-
յած ինչպես է կառուցված բույսը, նրա հրձիգ նյութերը նրա-
նից թռչում են 5—40 մետր հեռավորության վրա՝ պայթած տեղից
հաշված: Ռումբի քաղը լինում է 2—50 կիլոգր: Նայած բույսերի
պայթյունին՝ նրանք լինում են բախական և հեռակայական գոր-
ծողություն: Բախական բույսերը պայթում են շենքի ու կա-
ռուցվածքի ներսը թափանցելով, հեռակայական բույսերը պայ-

թում են ողում վառվող նյութը անձրևի նման շաղ տալով
չորս կողմը:

Քիմիական բույսերը վայրը վարակելու համար են, նպատակ
ունենալով դժվարացնել այդ վայրով գործերի, բնակչության
տեղաշարժերը և այլն. նույնպես և վարակելու համար արդյու-
նաբերական ձեռնարկությունները և ամրանետման յենթակա
մյուս որյեկտները ու մարդկանց թն անմիջապես վնասելու հա-
մար. վարակումը մեծ մասամբ կատարվում է միաժամանակ
վնասվածքներ առաջացնելու մյուս տեսակների հետ (ավերում,
հրձիգում և այլն):

Այս տեսակի բույսերն ունեն տարբեր գործողության քի-
միական թույնավորող նյութեր: Կայուն թն ունեցող բույսերի
քաշն է 50—500 կիլոգրամ: Կայուն թն ունեցող քիմիական
բույսերը միջին հաշվով վարակում է 350—750 քառակուսի
մետր մակերես (750 քառակուսի մետր վարակման մակերես է
գոյանում այն ժամանակ, յերբ բույսերը պայթում են ողում
150—300 մետր բարձրության վրա): Անկայուն թն ունեցող ամպ
և գոյացում մոտավորապես 15—20 մետր տրամագծով, լցնելով
մոտ 2000—4000 քառակուսի մետր տարածություն (նկատի
ունենալով, վոր թն տարածվում են 10—15 մետր բարձրությամբ):

Ողաքիմիական հարձակման միջոցների են պատկանում
նույնպես ավիացիոն այն գործիքները, վորոնք թափում կամ
շաղ են տալիս թույնավորող նյութեր: Թն ցանումը կատարվում
է կենդանի նշանների և բնակավայրերի վրա:

ԹՈՒՆԱՎՈՐՈՂ ՆՅՈՒԹԵՐ: Մարտական թույնավորող նյու-
թեր են կոչվում քիմիական այնպիսի բաղադրությունները
(նյութերը), վորոնք մարտական գործադրության ժամանակ կա-
րող են կամ մարտիկին թույնավորելով հանել նրան շարքից,
կամ զգալի չափով նվազեցնել նրա մարտունակությունը: Նայած
թն ֆիզիկական կամ քիմիական ինչ հատկություններ ունեն,
տակտիկական տեսակետից բաժանվում են յերկու կատեգորիայի
—կայուն և անկայուն թն:

Կայուն թն գործադրում են այն դեպքում, յերբ հարձակ-
ման նպատակն է դադարեցնել վորևե որյեկտի գործունեյու-
թյունը ավելի կամ պակաս տեական ժամանակով: Կայուն թն
վարակումը դժվարացնում է խիստ յերկարատե ժամանակով
վայրի առանձին տեղամասերում մնալը, վորոնք հաճախ մեծ
են լինում իրենց մակերեսով:

Անկաշուն ԹՆ (կարճատե գործողութեան), վորոնք տրա-
գորեն գոլորշիանում ու ցրվում են ողում, գործադրվում են
այն դեպքում, յերբ հարկավոր է արագորեն ազդել հակառա-
կորդի վրա, նրան՝ կորուստ պատճառելով, կամ յերբ պետք է
հարկադրել հակառակորդին հագնելու հակագազերը և այդպիսով
նվազեցնել նրա մարտունակութունը. սրանց գործադրութեանը
թիկունքների վրա զգալի չափով ավելի սակավ է լինում, քան
կաշուն ԹՆ գործադրութեանը:

Կենդանի որգանիզմի վրա ներգործելու տեսակետից ԹՆ
բաժանվում են 5 խմբի:

1. Հեղձուցիչ ներգործության ԹՆ. Սրանց թվին են պատ-
կանում քլորը, ֆոսգինը, դիֆոսգինը և քլորպիկրինը. ընդվո-
րում ֆոսգինը և դիֆոսգինը ներգործում են վորպես թունա-
վորող նյութեր, իսկ քլորպիկրինը, սկսած փոքր համակենտ-
րոնացումներից, — ներգործում են վորպես արտասվաբեր և վոր-
պես թունավորող նյութեր:

2. Թունավորող ներգործման նյութեր: Այս խմբին են պատ-
կանում ածխածնի ոքսիդը (շմուքի ուգարի գաղը), ֆոսգինը
և դիֆոսգինը:

Այս խմբի գլխավոր ներկայացուցիչն է ածխածնի ոքսիդը,
վորը խիստ թունավոր է, շնորհիվ իր ցնդունութեան (ածխածնի-
նի ոքսիդի գոլորշիներն ավելի թեթեւ են, քան ողը) մեծ չափով
չի կարելի գործադրել:

3. Պալարային ներգործության ԹՆ: Գլխավոր տեսակներն
են իպրիտը, լյուեիզիտը և դիկը, վորոնք մարմնի վրա (կաշու վրա)
առաջ են բերում այրվածքներ, բշտիկների ձևով, վոր հետո խո-
ցեր են դառնում: Իպրիտը միանգամից չի ներգործում, այլ մի
քանի ժամ անցնելուց հետո: Պալարային ԹՆ, վորոնք գործադր-
վում են մառախուղի կամ գոլորշու ձևով, որգանիզմի ներսն
ընկնելու դեպքում մեծ մասամբ մահ են պատճառում: Այս ԹՆ
գլխավորապես գործադրվում են գետինը, շենքերը, սարքավո-
րումները վարակելու համար և այլն:

4. Արտասվաբեր ներգործության ԹՆ: Այս խմբին են պատկա-
նում այն թունավորող նյութերը, վորոնք, նույնիսկ չափազանց
աննշան քանակութեամբ, արագորեն ներգործում են աչքերի վը-
րա, ուժեղ արտասուք առաջացնելով:

5. Գրգռիչ ներգործության ԹՆ: Այս խմբի մեջ են մտնում
բոլոր մկնդեղային բաղադրութեամբ նյութերը (արսիններ). ինչ-
պես՝ աղամսիտը, դիկը, լյուեիզիտը:

Այդ բոլոր ԹՆ, ունենալով թունավոր ներգործութեան որ-
գանիզմի վրա, խիստ ներգործում են նաև քթակոկորդի վրա,
առաջ բերելով փռուտոց և քոր կաշու վրա:

Այս հատվածում մեջ բերած համառոտ տեղեկութեանները
պետք է տարրական հասկացողութեան տան մեր ընթերցողին,
այն մասին թե ինչի նա կարող է հանդիպել ապագա պատե-
րադմում ողային հարձակման պայմաններում:

Նորհուրդների յերկրի աշխատավորները պետք է պատրաստ
լինեն հակողային պաշտպանութեան համար լիովին զինված:

Ընկ. Ստալինը հունվարյան պլենումում հայտարարեց, վոր
մենք ունենք բոլոր անհրաժեշտ պարագաները մասսայական քա-
նակութեամբ մեզ հարկավոր կալի միջոցները պատրաստելու հա-
մար:

Կասկած չկա, վոր հակողային պաշտպանութեան բնագա-
վառում նույնպես Նորհրդային Միութեանը իրենից ներկայաց-
նում է բավական ուժեղ մի յերկիր:

«Մեղանում չկար ավիացիոն արդյունաբերութեան, մեղա-
նում նա կա այժմ» (Ստալին): Ավիացիայի համամիութենական
որը մեր նվաճումների համար մի ցայտուն ցույց հանդիսացավ ողա-
յին տորմիլի շինարարութեան բնագավառում: Մեր Կարմիր բա-
նակը ի վիճակի յե հակառակորդի ողային հարձակումներին հա-
կադրել զենիթային հրանոթների և զնդացրերի հզոր կրակ,
վորն իր դիպուկութեամբ, արագաձգութեամբ և հեռահարու-
թեամբ չի դիջի ազդական տեխնիկայի վերջին նվաճումներին
այդ ասպարիզում: Մեր սոցիալիստական արդյունաբերութեանը
հարկավոր պահին կկարողանա ապահովել հակողային պաշտ-
նանութեան և ողային հակառակորդին վոչնչացնելու համար
ահանջվող միջոցների արտադրութեանը:

Բնակչութեան ինքնապաշտպանութեանը սոցիալիստական
յերկրի Հակողային պաշտպանութեան միասնական հզոր սիս-
տեմի տարրերից մեկն է:

ԿՈՆՏՐՈՒ ՀՍՐՅԵՐ

1. Ռաբկոմիչ, կործանիչ և հետախուզական ավիացիայի նշանակումը:

2. Վնասելու ինչ միջոցներ ունի ավիացիան:

3. Ինչ նպատակի համար են ծառայում ֆուգասային, բեկորային, հրձիգ
և քիմիական ուժերը:

4. Ի՞նչ է ԹՆ:

5. Ի՞նչ խմբերի յեն բաժանվում ԹՆ մարդու որդանիզմի վրա ունեցած ներգործության տեսակետից:

Գ Լ Ո Ի Խ II

ՀԱՎՈՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԸ ՅԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆԲՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐԴԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԱՅՂ ՍԻՍՏԵՄԻ ՄԵՋ

ԿԱՅԱՆԻ, ՈՐՅԵԿՏԻ ՀԱՎՈՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ: Հակառակորդի հարձակումն ողից (յերբ բնակչությունը հակողային պաշտպանության խնամքով կազմակերպման տեսակետից անպատրաստ է և անկազմակերպ) սպառնում է ծանր բարդություններ թիկունքի աշխատանքին և հետևապես լուրջ կերպով անդրադառնում է նաև ճակատի մարտական աշխատանքի վրա: Մեր յերկրի յուրաքանչյուր աշխատավորի պատվազոր և պատասխանատու խնդիրն է՝ հակառակորդին հանդիպել զինված գիտելիքներով և պրակտիկ ունակություններով՝ յետ մղելու համար նրան ամեն տեսակ պայմաններում:

Ինչպե՞ս է կառուցվում հակողային պաշտպանության սիստեմը:

Կարևորագույն որոշումները (նայած նրանց փոխադարձ դասավորությանը, ստրատեգիական և այլ նշանակությանը) կազմակերպում են ՀՈՊ-ի կայանները: Այդ կայաններն իրենց կազմում կարող են ունենալ պաշտպանության որոշումների մեկ կամ մի քանի խմբեր:

Կայանների ու որոշումների հակողային պաշտպանությունը դեռևս խաղաղ ժամանակ պետք է լիովին պատրաստ լինի յետ մղելու ողային հակառակորդի հարձակումը: Հակողային պաշտպանության կայանի պատրաստությունը ղեկավարում է ՀՈՊ-ի կայանի պետը: Նա կայանին ամրացված հակողային պաշտպանության բոլոր մասերի և մարմինների անմիջական պետն է, վորը և լիակատար պատասխանատվություն է կրում ՀՈՊ-ի կողմից անցկացվող բոլոր միջոցառումների նպատակահարմարության, ճշտության և ժամանակին կատարման համար:

ՀՈՊ-ի կայանի պետ է նշանակվում սովորաբար ՀՈՊ-ի

կայանում գտնված զորական մասի հրամատարը կամ հրամատարական կազմից մեկնում եկը:

ՀՈՊ կայանի պետն իր աշխատանքում հենվում է տեղական իշխանության մարմինների, զորական մասերի, կուսակցական կազմակերպությունների և խորհրդային լայն հասարակայնության լիակատար աջակցության և պաշտպանության վրա:

Ղեկավարման հարմարության համար ՀՈՊ խոշոր կայանները բաժանվում են ռայոնների. այդ ռայոններից յուրաքանչյուրի համար նշանակվում է ՀՈՊ հատուկ պետ: ՀՈՊ ռայոնների պետեր են նշանակվում սովորաբար տեղական վարչության ռայոնական մարմինների ղեկավարները:

Ռայոնների վարչական բաժանում չունեցող ՀՈՊ կայանները նույնպես, ինչպես և խոշոր կայանների ՀՈՊ ռայոնները բաժանվում են ՀՈՊ-ի շրջանների: ՀՈՊ շրջանները ստեղծվում են հետևյալ կերպ.

1. Առդյունաբերական շրջաններ — առանձնացնելով առանձին խոշոր որոշումները կամ միջակ և փոքր որոշումները խմբերի բաժանելով, ՀՈՊ միասնական ղեկավարության ներքո, նրանց անմիջապես յենթարկելով ՀՈՊ կայանի կամ ռայոնի պետին:

2. Հասուկ շրջաններ — առանձնացնելով սպեցիֆիկ առանձնահատկություններ ունեցող որոշումները իր կազմակերպության և ղեկավարման մեջ (յերկաթուղային հանգույցներ, այլ բողոմներ, զինվորական թաղամասեր, պահեստներ և այլն), և վերջապես

3. Բնակչության պաշտպանության (ԲՊ) շրջաններ, վորոնք ընդգրկում են մնացած ամբողջ բնակեցված տերիտորիան:

Հակողային պաշտպանության կայանի պետի ղեկավարմարմինն է հանդիսանում ՀՈՊ կայանի շտաբը. շտաբի պետն անմիջապես յենթարկվում է կայանի պետին: Շտաբի կազմի մեջ են մտնում ՎՆՈՍ (ողային դիտողության և ծանուցման), ՎՆԱԲ (նեղքին դիտողության և հետախուզության) և կապի ծառայությունները և ոպերատիվ մասը:

Քաղաքային ռայոնի պետը ղեկավարում է ՀՈՊ ծառայությունը՝ անմիջապես իրեն յենթակա ռայոնի շտաբի պետի, ՀՈՊ շրջանների պետերի և ՀՈՊ որոշումների պետերի միջոցով:

ՀՈՊ ծառայությունների պետեր, զինվորական աշխատողների հետ միասին կարող են նշանակվել նաև քաղաքացիական անձինք: Քաղաքացի աշխատողները, սովորաբար, պատասխա-

նաառաջ ղեկավարներ լինելով տեղական վարչութիւն վարչական վորոշ մարմինների համար, ՀՈՊ ամբողջ աշխատանքն անց են կացնում իրենց գերատեսչական ապարատների միջոցով:

Որչեկտների ՀՈՊ ղեկավարութիւնը դրվում է արդյունաբերական ձեռնարկութիւնների գիրեկտորների, յերկաթուղային հանգույցների և կայարանների և այլն պետերի վրա: Այդ անձինք պատասխանատու յեն ՀՈՊ իրենց որչեկտների պատրաստութիւն ընդհանուր դրութիւն համար, այլև ՀՈՊ սահմանած բոլոր միջոցառումների ժամանակին և ձիշտ կատարման համար:

Որչեկտների հակողային պաշտպանութիւն կազմակերպումը լիովին պետք է կապել արտագրութիւն վարչութիւն համար գոյութիւն ունեցող սիստեմի հետ: Պաշտպանական միջոցառումների անցկացմանը պետք է ներգրավել հիմնական բոլոր մարմիններին և ձեռնարկութիւնների կամ հիմնարկութիւնների պաշտոնատար անձերին:

Որչեկտի պետը ՀՈՊ ծառայութիւն ուղերատիւ ղեկավարութիւնն իրականացնում է շտաբի հատուկ նշանակված պետի միջոցով, իսկ հատուկ ղեկավարութիւնը կատարում է արտագրութիւն մեջ իր ոգնականների միջոցով:

ՀՈՊ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: Բնակչութիւն պաշտպանութիւնը ողային հարձակումների դիմ պետք է ստեղծվի իրենց աշխատավորների ինքնագործունեյութիւն: Աշխատավորներն ամեն կերպ աջակցութիւն ցույց տալով գերատեսչական կարգով անցկացվող աշխատանքին, իրենք պարտավոր են կիրառել ՀՈՊ մի շարք միջոցառումներ իրենց բնակավայրում: Այդ միջոցառումներին են վերաբերում բնակավայրերի ընդհանուր քողարկմանը մասնակցութիւնը, անհատական պաշտպանութիւն միջոցների կիրառումը, գազապատանների կառուցումը, հարմարեցնելով դրանց համար բնակարանները և այլ շէնքերը, վորոնք հնարավորութիւն են տալիս պաշտպանվելու թիւ, հարձակումների ժամանակ բոլոր կանոնների կատարումը:

Միևնույն ժամանակ աշխատավորները կամավոր հիմունքներով մասնակցում են ՀՈՊ խմբերում, ակտիւ աշխատանք են կատարում Պաշտպանութիւն շարքերում՝ ստեղծելու ՀՈՊ հատուկ կազմակերպութիւններ, պաշտպանելու բնակչութիւնը (ՀՈՊ շրջանները), բնակատեղիներում կազմակերպում են ինքնապաշտ-

պանութիւն խմբակներ, ձգտելով բանվորների բնակարանները դարձնել ՀՈՊ ամբողջներ:

Ինքնապաշտպանութիւն խմբակը Պաշտպանութիւն ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀՈՊ հիմնական ակտիւն է, վորն առանձնապես վարժպած է, ընդունակ է կազմակերպելու և իրականացնելու ողային հարձակումների դեմ ինքնապաշտպանութիւն համար աշխատավորների պատրաստութիւն ղեկավարութիւնը: Տնային վարչութիւնների ամենակտիւ աջակցութիւն բնակիչութիւններում կիրառվում են ՀՈՊ հիմնական միջոցառումները: Զեռք են բերվում հակահրդեհային միջոցներ, պատրաստում են ավազ և վերասարքավորում են ջրմուղու ցանցն, այնպես, վոր հնարավոր լինի հրդեհը հանգցնել տան ամեն մի տեղում: Այդ խմբակը ձեռք է բերում հրդեհաշիջ անհրաժեշտ գույք՝ թե հրդեհաշիջ մասերի հաջող գործողութիւն համար, և թե հրդեհների դեպքում մարդկանց և գույքը փրկելու համար: Մահմանվում են վառարանները վառելու և կրակից ոգտվելու կանոններ և նշվում է այդ կանոնների կատարման հակողութիւն կարգը:

Նշանակվում է որապահութիւն այն անձնավորութիւններից, վորոնք հսկում են տան կարգուկանոնին թուխքների հարձակումների ժամանակ և բնակչութիւնը փողոցից թազցնելուն: Պատրաստվում է զազսահանման նյութ բազարար քանակութիւնը և միևնույն ժամանակ ապահովում են այդ նյութի անխափան ծախսումն ու փոխանցիկ պաշարի առակայութիւնը հենց խաղաղ ժամանակ:

Ստեղծվում են այնպիսի պայմաններ, վորոնք հնարավորութիւն են տալիս ոգտագործելու բժշկական կայանները, բաղնիքները, լվացքատները, ջրցանները (դուշերը) հարձակումների ժամանակ՝ բնակչութիւնը բժշկական-սանիտարական սպասարկման նպատակների համար: Միաժամանակ ձեռք են բերվում դեղարկիւններ վնասվելու դեպքում բժշկական առաջին ոգնութիւնը ցույց տալու համար: Տնային վարչութիւններն ամեն կերպ աջակցում են ինքնապաշտպանութիւն խմբակների կազմակերպմանն ու մարտական պատրաստութիւնը:

Ինքնապաշտպանութիւն խմբակի պարապմունքների և հավաքների համար անհրաժեշտ է շէնք հատկացնել (վորի համար ոգտագործում են կարմիր անկյունները կամ բնակչութիւնը կուտուրական սպասարկման մյուս տեղերը) և կարգավորել

վարժական ու մարտական գույքի պահպանումը:

Ոգային տագնապի ազդանշան տալուն պես բնակմիությունում պետք է կիրառել հետևյալ կարգը.

Տան ամբողջ ակտիվը, վորը չի մտնում ՀՈՊ խմբերի կազմի մեջ և տանն է գտնվում, պետք է հավաքվի մի տեղ (առաջուց նշանակված), և մտնի ինքնապաշտպանություն խմբակի պետի կարգադրության տակ:

Բոլոր դարպասներն ու մուտքի դռները բացվում են և նըրանց մոտ նշանակվում են որապահներ և ղեկավարներ փողոցից թագնվող տրանսպորտի և մարդկանց շարժումը կանոնավորելու համար:

Յեթե տան մեջ կան այնպիսի մարդիկ, վորոնք ՀՈՊ մասերի կազմին են պատկանում, անմիջապես անհրաժեշտ է հայտնել նրանց հարձակման մասին:

Բնակարաններում պետք է ձեռք առնեն այն բոլոր միջոցները, վորոնք նախատեսված են հարձակման ժամանակի համար: Բնակչությունը ջուր է վերցնում յուրաքանչյուր մարդուն մոտ մի դուլլի հաշվով. հանդցնում են կրակները. գիշեր ժամանակ հանդցնում են դրսի լուսավորությունը և այլն: ՀՈՊ անմիջապես մասնակցություն չունեցող բոլոր բնակիչները ֆնում են իրենց բնակարաններում:

Հարձակման ժամանակ ինքնապաշտպանություն խմբակն անմիջապես միջոցներ և ձեռք առնում վերացներու հարձակման հետևանքները (հանգցնում է հրդեհները, դադարեցնում է խուճապը և այլն):

Մինչև հատուկ միջոցների գալը, այդ գործին են ներգրավում աշխատունակ բնակչությունը — ինչպես տվյալ տանն ապրողներին, այնպես էլ այնտեղ ժամանակավորապես պաշտպանվողներին:

Առանձնահատուկ ուղադրություն պետք է դարձնել բնակչության գույքի պահպանման և վնասվածներին ոգնություն ցույց տալու վրա: Այդ պետք է կատարվի հրդեհներն ու խուճապը վերացնելու հետ միաժամանակ:

Բնակմիության մեջ ՀՈՊ կազմակերպելիս անհրաժեշտ է հիշել, վոր ամեն անգամ չի կարելի հույսը դնել դրսից արագ ոգնություն ստանալու վրա, յերբ տունն է վնասվում: Ոգնությունը կգա, բայց յերբեմն ուղացումով. այդ պատճառով, վոր-

քան խնամքով կազմակերպված լինի ՀՈՊ տվյալ տնում, այնքան հաջողությամբ կապահովվի այդ տան բնակիչների պաշտպանությունը:

Ինքնապաշտպանության համակարգի մասին հարձակումների դեմ պետք է գերազանց պաշտպանություն կազմակերպման որինակ ցույց տան:

«Իրենց բնակություն վայրում ոգային հարձակումների դեմ անմիջական պաշտպանությունը կազմակերպելու տեսակետից առավելագույն ինքնագործունեություն չափազանց, Պաշտպանության կենտրոնական խորհուրդը մարտական խնդիր է առաջադրում ընկերության բոլոր կազմակերպություններին — «բանվորական բնակարանները (հանրակացարաններ, սներ, բանվորական ավաններ, քաղեր) դառննել հակողային պաշտպանության ամրոցներ» (ԽՍՀՄ Պաշտպանության Միության կենտրոնի հրահանգների ընդհանուր կարգը):

Տվյալ տնում ապրող աշխատավորները պետք է վոչ միայն հարյուր տոկոսով ընդգրկված լինեն Պաշտպանության մեջ, այլև ակտիվորեն մասնակցեն Պաշտպանության բոլոր պրակտիկ աշխատանքին, ամեն կերպ ոգնելով բանվորների բնակարանները, ավանները, թաղերը դարձնելու ՀՈՊ ամրոցներ:

Անհրաժեշտ է կազմակերպել և կանոնավորել մասսայական քաղաքական աշխատանքը, ընթացիկ քաղաքականության խմբակների աշխատանքը:

Պաշտպանության բոլորները պարտավոր են կազմակերպել ուղեգրային խմբակների կազմակերպություններ և աշխատավոր բնակչությանը ներգրավեն ընկերության գործունեական պաշտպանական աշխատանքին:

Ուղեգրային խմբակների կազմակերպությունը լայնորեն ծավալելու համար պետք է.

1. Տարածել լուրջագույն յեվ պլակատներ, վորոնք մոբիլիզացիայի յեն յեն թարկում աշխատավորներին՝ լուծելու մասսայական ուղեգրային խմբակների կազմակերպության խնդիրներ:

2. Կազմակերպել հասուկ գրույցներ ուղեգրային խմբակների շուրջը:

3. Ծանոթացնել ուղեգրային խմբակների առանձին տարրերին (հակազգ, հակաքիմիական տեսակետից շենքերի հարմարեցումը, ՀՈՊ շրջանի, որյեկտի, կայանի հակողային պաշտ-

պանության կազմակերպումը, գաղահանման միջոցներն ու յեղանակները և այլն), կազմակերպելով դասախոսություններ, գեղուցումներ, դիապոզիտիվների ցուցադրում և այլն: Անհրաժեշտ և վերացնել ՀՈՊ անգրագիտությունը 16 տարեկան և բարձր տարիքի աշխատավոր բնակչության միջ:

Յուրաքանչյուր աշխատավոր պետք է հակազուգ ձեռք բերի, սովորի ոգավել նրանից, վարժվի հակազուգ հագած մնալ առնվազն կես ժամ և անցնի կամերային գաղացումը:

Բանվորական բնակարաններում որինակելի ձևով պետք է դնել հակահրդեհային գործը ինչպես նորմալ, այնպես էլ ողջային հարձակման պայմաններում:

Բանվորական բնակատեղերում կարմիր խաչի և կարմիր կիսալուսնի բժշկական միջոցով պետք է կազմակերպել բժշկասանիտարական պոստ փոքրիկ դեղատնով բնակչությանը թե խաղաղ և թե պատերազմի ժամանակ անհետաձգելի բժշկական ոգնություն ցույց տալու համար: Բացի դրանից, անհրաժեշտ է որինակելի ձևով դնել տան սանիտարական պայմանների բարելավման աշխատանքը, որինակ՝ մաքրություն հսկողությունը, տունը բոլոր պարագիտներից, (փայտոջիլներից, բլոշներից) և կրծողներից (առնիտներից, մկներից) մաքրելը:

Բանվորական տներում, թաղամասերում, հանրակացարաններում հարկավոր է թեկուզ ամենապարզ չեղանակներով սարքավորել հատուկ սենյակներ գաղապաստանների, լվացման կացաններ—հարմարեցնելով այդ նպատակով վտանանների և դուշերի սենյակները:

Տվյալ բնակավայրի Պաշտպանության բժշկական անց է կացնում ընկերության և տեղական կազմակերպության խնդիրների պրոպագանդը և այդ աշխատանքի հիման վրա որինակելիորեն տարածում և Պաշտպանության վիճակախաղի տոմսերը:

Բնակատեղի բանվորները պարտավոր են ձշտորեն կատարել տնայինարարական, տնային վարչության տեղական վարչական մարմինների պարտադիր վորոշումները և սահմանված բնակարանային կանոնները:

Աշխատավոր բնակչության հակադային պաշտպանության կազմակերպումը խոշոր չափով կախված է հենց իրենց աշխատավորների ինքնագործունեությունից և նախաձեռնությունից. նրանց պարտքն է՝ անմիջական գործնական մասնակցություն

ունենալ ՀՈՊ միջոցառումներին մեջ, վոչ միայն ՀՈՊ առարկայում անգրագիտությունը վերացնելու, այլև Պաշտպանության ախտիվից ինքնապաշտպանության խմբակներ կազմակերպելու և Պաշտպանության բժշկական ՀՈՊ սեկտորի աշխատանքը որինակելիորեն դնելու մեջ: Այդ ամբողջ աշխատանքն անց է կացվում հասարակական բոլոր կազմակերպությունների (աղի-բարեկամների) ընկ. միջոցների աջակցող ընկերության, կարմիր խաչի և կարմիր Մահիլի ընկ. և այլն ախտիվ գործունեությունում:

Բանվորական այն բնակատեղը (թաղամաս, ավան, հանրակացարան), վորը կապահովի այդ բոլոր պահանջների կատարումը, իրավունք ունի ստանալու «հակադային պաշտպանության ամբոցի» կոչում:

Ինժեներական և ԽՍՀՄ Կոնստրուկտիվ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌԱՐԱՆՈՒՄՆԵՐ: Ինքնապաշտպանության խմբակների մարտական պատրաստությունն անց է կացվում վոչ պակաս, քան վեցորյակում մեկ անգամ, յուրաքանչյուր պարապմունքը 2—3 ական ժամ, այն հաշվով, վորպեսզի ուսուցման ամբողջ կուրսն անցնեն չորս ամսվա ընթացքում: Պատրաստության ընդհանուր կուրսը հաշվված է 50 ժամվա համար: Պարապմունքներն անց են կացվում խմբակի կողմից սպասարկվող վայրում. (բնակավայրի ընկերություն, թաղամաս, գարոց, հիմնարկություն և այլն): Ընդվորում դասարաններին և լսարաններին համար անհրաժեշտության դեպքում պետք է ոգտագործել կարմիր խաչի ընկերություններին, ախումբներին և այլ սենյակները:

Մարտական պատրաստությունից հետո խմբակը պետք է կարողանա:

1) Խեցնուրային կերպով կողմորոշվել ողային հաճախված պարագայում, նախագգուցանել բնակչությանը ինքնապաշտպանության միջոցների մասին պարագայի կոնկրետ պայմանների համեմատ, նույնպես և ՀՈՊ կարգապահություն մոցնել բնակչության մեջ, այնպես, վոր ախտիվը վնասներ չլինեն:

2) Յույց տալ անհետաձգելի նախաբժշկական ոգնություն վրնառվածներին. իր բնակավայրի սահմաններում առձեռն միջոցներով, ինքնուրույն կերպով և բնակչության ոգնությունը, չեղորացնել հրդեհի ողայինները, կատարել շենքերի և գույքի գահահանման հասարակ աշխատանքներն իր բնակավայրի (տան) զրջանում, յերբ այդ շենքերն ու գույքը վարակվում են կախում



թանալոր նյութերով, կանխել խուճապն ու պայքարել նրա դեմ:

3) Անհրաժեշտ աջակցություն ցույց տալ ՀՈՊ եղբայրային յեղկայարանի մասերին (հետախուզությանը, վնասված ոչախների շրջապատմանն ու շղթայմանը, վանազան նյութեր կրել-բերելուն և այլն):

4) Լինել Պաշտպանության ՀՈՊ սեկտորի գրագետ անդամի տվյալ բնակիչության բոլոր բնակիչներին կազմակերպելու ողջային հարձակումների դեմ ինքնապաշտպանության համար և ծավալելու ՀՈՊ մասնաճյուղի լայն աշխատանքը:

Անհրաժեշտ մարտական հատկությունները ձեռք են բերվում ուսուցման ճիշտ բովանդակությամբ և պատշաճ կազմակերպությամբ ու մեթոդիկայով:

Ուսուցման մեթոդիկան պետք է նպաստի մշակելու ինքնապաշտպանության խմբակի մարտիկներին մեջ ՀՈՊ մասնաճյուղի աշխատանքի գործնական ունակություններ և պետք է ներպատկեր մարտական աշխատանքին ողջային հարձակումների պայմաններում: Հարկավոր է ամեն կերպ իր բնակիչության (տան, դպրոցի, հիմնարկության և այլն) վայրում պարագլուխներին անցկացման պայմանները բնույթով մոտեցնել մարտական աշխատանքի պայմաններին:

Սովորելիքի տակտիկական պատրաստությունը բաղկացած է հետևյալ հիմնական մոմենտներից (մարտական խնդիրներից):

1) Հավաքվելու օղակին ճաշակալի ազդանշանով:

2) Ինֆնապատկանություն խմբակների գործողությունները վերականգնելու պայմաններում:

3) Ինֆնապատկանություն խմբակի գործողություններն ավերակների ժամանակ:

4) Ինֆնապատկանություն խմբակի գործողությունները հրդեհ ծագած ժամանակ:

5) Մասնաճյուղի աշխատանքի բնակչության ինֆնապատկանությունը կազմակերպելու գործում:

Մարտական պատրաստության առանցքային հարցերին տիրապետելն բաղկացած է մարտիկի սկզբնական պատրաստությունից՝ խմբակի կազմում գործելու համար և մարտական խնդիրներին աստիճանաբար տիրապետելուց:

Մարտական յուրաքանչյուր խնդիր կազմված է մի շարք քննական վարժություններից, վորոնց նախորդում են նախա-

պատրաստական վարժությունները: Քննական վարժության կատարումը ցույց է տալիս, վոր ինքնապաշտպանության խմբակը պատրաստ է կատարելու վարժական խնդիրը: Նախապատրաստական վարժությունները մշակում են ախպիսի ունակություններ և գիտելիքներ, վորոնք ապահովում են քննական վարժության և ապա նաև մեքողջ մարտական խնդրի վստահ կատարումը:

Այն մարտիկները, վորոնք չեն կատարել նախապատրաստական վարժությունները, թույլ չեն տրվում կատարելու քննական վարժությունները:

Վարժական խնդրի կատարման ժամանակը վորոշում են, յենելով հետևյալ պարտադիր պահանջներից:

1) Մինչև վորաքանչյուր վարժության լիակատար մեկումը չանցնել հաջորդ վարժություն:

2) Ուսուցման ժամանակ, անհրաժեշտ դեպքում, բոլոր վարժությունների մեկումն համար կարելի յե ավելացնել լրացուցիչ ժամերի հավելում:

Ձի թույլատրվում մի խնդրից մյուսին անցնել ժամերի հաշվում ցույց տրված ժամանակը լրանալու պատճառով, յերբ չեն մշակել նորմատիվները:

Ինքնապաշտպանության խմբակներին ընդհանուր (սկզբնական) պատրաստության նպատակն է:

1) Դաստիարակել հասարակական աշխատող, դասակարգայնորեն գիտակից, պրոլետարական հեղափոխության գործին նըվիրված ՀՈՊ ակտիվիստ:

2) Դաստիարակել կազմակերպվածություն, գիտակցական հեղափոխական կարգապահություն և:

3) Ընդհանուր հասկացողություններ ունենալ ողջային հարձակման միջոցների և յեղանակների ու պաշտպանության անհատական միջոցների մասին:

Այս խնդիրները կատարվում են քաղաքական սխտեմատիկ աշխատանքով ուսուցման ամբողջ ժամանակաշրջանում:

Ընդհանուր պատրաստությունը բաղկացած է հետևյալ գիտելիքներից: 1) քաղաքական պատրաստություն: 2) ընդհանուր տեղեկություններ ողջային հարձակման միջոցների և յեղանակների մասին և 3) հակաքիմիական պաշտպանության միջոցներ:

Այդ գիտելիքներին տիրապետումը հիմնականում իրականացվում է նախապատրաստական վարժությունների մշակումով

և ժամանակի տեսակետից շարկապվում է հատուկ տակտիկական պատրաստություն հետ:

Ամբողջ մարտական պատրաստություն մեջ առաջատար տեղը պատկանում է սոցիալիստական մրցակցություն և հարվածայնության լայն ծավալմանը:

Անշարժորեն բարձր են պահանջները յետ մնացողների հետ տարվող աշխատանքի վորակի նկատմամբ: Խմբակի պետի, յուրաքանչյուր կուսակցականի, յուրաքանչյուր կոմյունիստականի առաջնահերթ պարտականությունն է բազմակողմանիորեն ուսումնասիրել ինքնապաշտպանության խմբակի յուրաքանչյուր մարտիկի հառաջդիմությունը, ժամանակին հայտարարել հետմնացողության պատճառները և ժամանակին ոգնել յետ մնացողներին, նրանց հասցնել առաջավորներին: Թեկուզ մեկ մարտիկի հետմնացությունը բացասական ցուցանիշ է ինքնապաշտպանության ամբողջ խմբակի համար:

ՊԱՐԱՊԵՐՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՅՈՒՄԸ ԽՄԲԱԿՆԵՐՈՒՄ:

Պարապմունքների հաջողությունն ու արդյունավետությունը ձեռք են բերվում նախ և առաջ այն դեպքում, յերբ գոյություն ունի պարապմունքների սլան և յերբ պատշաճ կերպով պատրաստված են ինքնապաշտպանության խմբակների պետերը:

Պարապմունքների պլանն իր մեջ ամփոփում է տվյալ թեմայի մշակման համար ճշտորեն սահմանված ուսուցման նպատակներ, վորի համեմատ նշվում են ուսուցման այն հարցերը, վորոնք պետք է մշակվեն պարապմունքի ժամանակ: Այդ հարցերը պետք է լինեն նվազագույն քանակով, այլ կերպ դեկլավարների և սովորողների ուղարկությունը կցրվի և մանրամասն մշակում ձեռք չի բերվի:

Տեղանքում անցկայվող պարապմունքների պլանը պետք է անպայման կազմել պարապմունքների շրջանի հետախուզության տվյալների հիման վրա: Ամեն անգամ պարապմունքները չսկսված՝ խմբակի պետը հետախուզություն է կատարում, նշում է վարակման յենթակա վայրերը և մշակում է վարակված ոչախում ինքնապաշտպանության խմբակի գործողության հիմնական վեճիկը:

Վայրի հետախուզությունից հետո, մշակվում են միջանկյալ տվյալներ, ցույց տալով թե յերբ և ինչ ձևով այդ տվյալները պետք է հանձնել սովորողներին, և մշակվում են սովորող-

ների որինակելի վեճիկները յուրաքանչյուր միջանկյալ խնդրի վերաբերյալ:

Միջանկյալ տվյալների պլանի հիման վրա կատարվում է իմիտացիոն նյութերի հաշիվը: Այդ նյութերի պահանջը տարբեր պարապմունքների համար միատեսակ չի կարող լինել: Որինակ՝ ինքնապաշտպանության խմբակի վնասված ոչախում գործողությունն ուսուցման ժամանակ պետք է կիրառել վարժական ԹՆ (կարբոլյան թթվում). հրդեհի ժամանակ գործողության ուսուցման ժամանակ պետք է կիրառել ծխախառնուրդ. վնասվածներին ոգնություն ցույց տալու համար անձնակազմից նշանակվում են հատուկ մարդիկ գաղահանման նյութերը հաջողությամբ կարելի յե փոխարինել ջրով, ավազով կամ թեփով. ավերակների փվածքներին տեղերը և այն կարելի յե ցույց տալ զանազան գույնի դրոշակներով:

Պարապմունքի հաջողության վճռական պայմանն է նրանց նյութական ապահովումը: Պետք է ձգտել ըստ հնարավորին խուսափել ամեն տեսակ պայմանական նշուհներից:

Նախքան պարապմունքների սկիզբը, ինքնապաշտպանության պետը, հանդիսանալով պարապմունքների ղեկավարը, անց է կացնում ներածական զրույց (15 րոպեյից վոչ ավելի). շատ համառոտ նա բացատրում է պարապմունքների անցկացման հիմնական խնդիրներն ու կարգը:

Ներածական զրույցից հետո, սովորողներն անցնում են խնդրի լուծմանը: Ղեկավարը հսկում է նրանց գործողություններին և ուղղում է նրանց սխալները լրացուցիչ տվյալների միջոցով, վորոնք նպաստում են ճիշտ գործողություններ կատարելուն, ընդ վորում այդ լրացուցիչ միջանկյալ տվյալները չըպետք է փոփոխություն մտցնեն պարապմունքների ընդհանուր ընթացքի մեջ:

Յեթե անհրաժեշտ է սխալները բացատրել բոլոր սովորողներին, ապա ղեկավարը կարող է այդ նպատակի համար դադարեցնել նրանց գործողությունները. յեթե պահանջվում է, նա տալիս է նրանց լրացուցիչ միջանկյալ խնդիրներ, վորից հետո պարապմունքը շարունակվում է. այսինքն՝ սկսում են կրկնել այն մասից, վորի կատարման ժամանակ սովորողները սխալ եյին արել:

Պարապմունքներից հետո կատարում են անցածի դերլուծումը (15—20 րոպե). ղեկավարը նշում է սխալները, դրական

կողմերը, և Գնահատական և տալիս անցած վարժության կատարման համար:

Վերլուծումը միշտ պիտք է կատարել պարապմունքի վայրում, պարապմունքը վերջացնելուց անմիջապես հետո: Միանգամայն անթույլատրելի յետ վերլուծումն անցկացնել սովորողների յետլուծներով և հակաճառություններով, վորովհետև այդ դեպքում մանր բաների պատճառով կքողարկվի պարապմունքի հիմնական խնդիրները:

Ողային հարձակման պայմաններում, ողային տաղանայի ազդանշանով, կարգապահության և վարվեցողության սովորություններ մշակելու համար խնքնապաշտպանության խմբակի պետերը և խմբակի ամբողջ ակտիվը պետք է պարապմունքների մեջ ներգրավեն աշխատավոր բնակչության, բնակվարձկոպի վարչության անդամներին և մյուս պաշտոնատար անձերին: Խնքնապաշտպանության խմբակի պետը տեղում այս կամ այն տակտիկական խնդիրը լուծելու համար միջանկյալ տվյալները մշակելու ժամանակ պետք է հաշվի առնի այդ և միջանկյալ տվյալները մշակելի պարագայի կոնկրետ պայմաններին համապատասխան, ցույց տալով տվյալ բնակավայրի բնակիչներին և տնային վարչությունների պաշտոնատար անձերին այդ տվյալները հանձնելու ձևերը, պահանջելով նրանցից, վոր յուրաքանչյուր տվյալի պերաբերյալ ընդունեն վճիռ և գործողություններ:

ՀՈՊ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ՄԱՐԻՏԱԿԱՆ ՈՒՍՏԱԳՈՐԾՈՒՄԸ, Տեղական մասերը նշանակվում են վնասված ոջախները վերանայելու համար: ՀՈՊ տեղական մասերի մարտական ոգտադործումը կախված է ամենից առաջ հակառակորդի ողային հարձակման հնարավոր հետևանքներից: Հակառակորդը կսկսի ուժեղանալ վոր թե կայանն ամբողջությամբ, այլ նրանում յեղած կարևորագույն որյեկտները, վորոնց աշխատանքից և այս կամ այն չափով կախված ճակատի կյանքն ու մարտական աշխատանքը:

«Վնասված ոջախ» ասելով՝ հասկացվում է այն տերրիտորիան, վորը վնասված է մեկ կամ մի քանի միատեսակ կամ բազմատեսակ ավիառումներով, վորոնց ազդեցությունը տարածվում է տվյալ տերրիտորիայի սահմաններում:

ՀՈՊ տեղական մասերը մարտական ոգտադործման կարգին համապատասխան բաժանվում են 1-ին և 2-րդ շարաններին (եղե-

յունների). ընդ վորում առաջին շարանով վնասված ոջախն են ուղարկվում այն ՀՈՊ մասերը, վորոնցից պահանջվում է ավելի արագորեն ծավալել մարտական գործողությունները (հրդեհի, տանիտարական գործողությունները):

Գործողության մեջ դրված մասերը ղեկավարում է մարտաշրջանի (մարտական շրջանի) պետերը նա մեծ մասամբ նշանակվում է կայանի հրամանատարության կողմից:

«Մարտաշրջան» ասելով հասկացվում է վնասված ոջախում գործող մասերի ժամանակավոր միացումը:

Այդ մասերի գործողություններն սկսվում են «ողային տաղանապ» ազդանշանով և բաժանվում են մի շարք տակտիկական ետապներին. 1) յեղման դրության զրավելը «ողային տաղանապ» ազդանշանով, 2) վնասված ոջախների հետախուզությունը. 3) վնասված ոջախին մոտենալը, մասերի կենտրոնացումն ու նրանց բացազատումը, 4) մասերի գործողությունները վնասված ոջախում և 5) վնասված ոջախից դուրս գալը:

Մասերի յեղման դրության զրավելը կատարվում է անձնական կազմի հավաքվելու, մասնագիտական գույքը բաժանելու, գործիքները պատրաստ վիճակի մեջ դնելու և մասերին մարտական աշխատանքի համար պատրաստելու համար ճիշտ և նախորդոր նշված պլանով:

Վնասված ոջախի հետախուզությունն սկսվում է առաջին ուղիքը պայթելու մոմենտից և տարվում է մինչև բոլոր մասերի մարտական աշխատանքի լիակատար ավարտումը:

Վնասված ոջախին մոտեցումը 1-ին և 2-րդ շարաններում գտնված մասերի համար կատարվում է տարբեր ձևով: 1-ին շարանի հիմքերն ու ստորաբաժանումները, վորոնք նշանակված են գործելու սահմանափակ տերրիտորիայում, գործի յեն դրվում առումները պայթելուց անմիջապես հետո, առանց սպասելու կախանի հրամատարության ցուցումներին: Որյեկտների և շրջանների մասնագիտական խմբերը, վորպես կանոն, գործի յեն դրվում որյեկտների և շրջանների պետերի հրամանով:

Կայանի մասերը դեպի վնասված ոջախներն են տեղափոխվում կայանի պետի վճռի հիման վրա: Վնասված ոջախին մոտենալիս պետք է ապահովել ճանապարհի հետախուզությունը և հանդիպած արգելքների արագ հաղթահարումը:

Մարտական աշխատանքի ժամանակ մասերը գործում են

մարտակարգով, հարմարվելով վնասված վայրի պայմաններին և բնույթին:

Քիմիական մասերն ընդունում են սանդղաձև, մասնատված և համակցված մարտակարգեր: Սանդղաձև մարտակարգը բնորոշվում է՝ աշխատանքի ժամանակ հիմնական գործիքների աշխցիկում ձախից սանդղաձև դասավորումով: Իսկ ոժանդակ գործիքները դասավորվում են նրանց յետևում, վորպես աշխատանքը լրացնողներ: Սանդղաձև մարտակարգը հարթ վայրում գործադրվում է համատարած վնասված վայրերի, գործիքների միատեղ աշխատանքին խանգարող արգելքների գաղահանման ժամանակ: Համակցված մարտակարգը սանդղաձև և մասնատված մարտակարգերի զուգակցությունն է, յիբրե ստորաբաժանումների մի մասը գործում է սանդղաձև մարտակարգով, իսկ մյուս մասը առանձնացված է անցքերը գաղահանելու կամ որջիկաներին ոգնություն ցույց տալու համար:

Սանիտարական ստորաբաժանումների պահպանակային խմբակները վնասվածներին կենտրոնացնում են «բնիքում», վորոն տեղը պետք է ընտրել վարակման հոգմարեր սահմանի յետևում, և միաժամանակ նրանց ցույց են տալիս անհրաժեշտ ոգնությունը: Վնասվածները «բնիքից» տեղափոխվում են առաջին ոգնություն կայանները: Տվյալ մարտակարգը վորոշ չափով կարող է փոխվել, յիբրե ոգնությունն է ցույց տրվում թեթև վնասվածներին, վորոնք կարող են առանց ոգնության տեղափոխվել կամ վորոնց մաշկն է միայն վնասվել կայուն թունավոր նյութերով, յիբրե հարկավոր է գնություն կատարել և ուղարկել վնասվածներին լվացքատունը սանմշակման համար:

Հրդեհաեջ մասերի մարտակարգերը չեն տարբերվում նաև խաղաղ ժամանակում գործադրվող մարտակարգերից: Այդ մարտակարգերը բնորոշվում են այն ջոկատների աշխատանքով, վորոնք բողկացած են կացնակիրներից, խողովակակիրներից և պահպաններից իրենց մասնագիտական դերի համեմատ, հրդեհաեջ համարանքի մարտական ցուցակի համաձայն:

Ճարտարագիտական (ինժեներական) մասերը գործում են այն կետերում, վորտեղ նրանց մասնակցությունն անհրաժեշտ է պայթեցնելու համար այն կառուցվածքներն ու ամրությունները, վորոնք սպառնում են փլչել վնասվածքի պատճառով և նորոգելու համար ճանապարհները և այլ կառուցվածքները: Մարտակարգերը բնորոշվում են այդ մասերի մասնագիտական աշխատանքով և վնասված տեղի բնույթով:

Վերանորոգման-վերակառուցման բրիգադները, վորոնք կազմակերպվում են քաղաքային բարեկարգության հիմնարկությունների ցանցի կողմից, նույնպես գործում են զանազան ամրությունների ու կառուցվածքների վնասված տեղերին մոտիկ, ընդ վորում նրանց մարտակարգերը նույնպես բնորոշվում են աշխատանքի պայմաններով:

Միլիցիայի ռեզերվը և բնակչության պաշտպանության ՀՈՊ խմբերի կարգ պահպանելուն աջակցող բաժանմունքները ընդունում են հետևակային շարքեր ու կարգ: Վնասված ոչախում գործելու զեպքում նրանց հիմնական խնդիրն է վերականգնել կարգը, շղթայել վարակված տեղերը, պահպանել զանազան գույքեր և ապահովել մյուս մասերի գործողությունները:

Անասնաբուժային խմբերի մարտակարգերը կազմվում են վնասված կենդանիներին ոգնություն ցույց տալու ժամանակ խմբի բաժանմունքների մարտակարգերի զուգակցությունից:

Կապի մասերն ու ստորաբաժանումները միշտ գործում են առակենտրոնացված և չունեն հատուկ մարտակարգեր:

Մարտակարգերը կարող են փոփոխվել մասերի գործողության ժամանակ, նայած աշխատանքների ընթացքին:

ՀԱՅՈՒԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԵՎ ՈՒՆԻՏԱՐ (ՄԻԱՍՆԱԿԱՆ) ԽՄԲԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՊ ՇՐՋԱՆՈՒՄ: — Քաղաքամասի համար կազմակերպվում է մեկ քաղաքամասային խումբ: Այդ խմբի խնդիրն է՝ ապասարկել բնակչության պաշտպանության ՀՈՊ քաղաքամասը վարչության միջոցներով, ստեղծել մարտական ռեզերվ քաղաքամասի տերրիտորիայում դադանանման աշխատանքների համար և ստեղծել կարգը պահպանության մարմիններին: Քաղաքամասային խումբն անմիջականորեն յինթարկվում է քաղաքամասի պետին:

Քաղաքամասային խումբը միացնում է քաղաքամասի դեկավարության միջոցները—կապի ջոկը, դադանանման միջոցները—դադանանման դասակը—և կարգի պահպանության ու հետախուզության միջոցները—կարգի պահպանության և հետախուզության դասակը:

Կապի ջոկն ապահովում է քաղաքամասի դեկավարության անընդհատությունը մարտական բոլոր միջոցներով, քաղաքա-

մասի շտաբին տեղեկություններ հանձնելն ու ընդունելը:

Գաղահանման դասակը հանդիսանում է քաղաքամասի պետի և ռեզերվի ամհնից ավելի պատասխանատու տեղերում (քաղաքամասի տերրիտորիայում) գաղահանման աշխատանքներ կատարելու համար, վերի նպատակն է պահպանել փողոցի նորմալ շարժումը և ավելի արագորեն վերացնել վարակված ոջախները:

Դրա հետ միասին գաղահանման դասակը սպասարկում է պահեստներին, գաղահանման միջոցներ և նյութեր և հանձնում ՀՈՊ ալն մասերին, վորոնք գործում են քաղաքամասում:

Կարգի պահպանություն և հետախուզություն դասակը հանդիսանում է քաղաքամասի պետի ղինված ուժերի ռեզերվը քաղաքամասի տերրիտորիայում կարգ սահմանելու համար:

Ունիտար խմբերը կազմակերպվում են Պաշտպանության ՀՈՊ լավագույն ակտիվիստներից և մյուս հասարակական կազմակերպությունների ակտիվիստներից. այլև ՀՈՊ լավագույն «խոտերայիններից» (պահեստային ունիտարականներից), վորոնք գըտնըվում են բնակմիություններում, գըրոցներում և հանրակացարաններում. ընդգըրում այդ խմբերի լավագույն կազմն ամրացվում է ռազմական կոմիսարիատների միջոցով:

Ունիտար խմբերը կազմակերպվում են յերկրային սիստեմով: Նրանք համալրվում են հարևան դասավորված բնակմիություններից (մի քանի տներ, թաղեր). մեկ խումբ կազմակերպվում է այն հաղվով, վոր սպասարկի 10—20 հազար բնակչության: Խմբերի անձնակազմը անպայման պետք է ապրի իր բնակություն պաշտպանության ՀՈՊ քաղաքամասում և բնակմիության տերրիտորիայում:

Ունիտար խմբի կազմի մեջ են մտնում 5 ՀՈՊ տարբեր մասնագիտությունների ջոկեր. ույն են՝ կարգի պահպանության և հետախուզության ջոկը, սանիտարական, յերկու հակահրդեհային և մեկ գաղահանման ջոկեր:

Ոգային հարձակումների Ժամանակ ունիտար խումբն անմիջապես գործի յի գըրվում իր պետերի կարգադրություններ, յերբ իր ղիտողներից տեղեկություններ են ստանում վարակման մասին:

Ողային ջազմապի ազդամեռնով խմբի անձնակազմը հաղաքվում է հաղաքատեղը, պատրաստում է գույքը, հագնում է հակապրիտային հագուստը:

Կարգի պահպանության և հետախուզության ջոկերից արը-

վում են դիտապոստեր, վորոնք դիտում են սպասարկվող տերրիտորիան: Պոստերի քանակը, նրանց կազմն ու դասավորման տեղերը կախված են ստեղծված պարագայից:

Պոստի դասավորման ջրջանում վորևե վարակում հայտաբերելու դեպքում դիտողներն անմիջապես ղեկուցում են այդ մասին իրենց խմբի պետին:

Խմբի պետն, ստանալով դիտողություն պոստերի ղեկուցումները, նայած պարագային, գործի յի դնում ամբողջ խումբը կամ նրա առանձին ստորաբաժանումները:

Վարակում գոյություն ունեցող դեպքում խումբը նախ և առաջ ընակչության դուրս է բերում վարակված ոջախից մի անվտանգ տեղ և անմիջապես ոգնություն և ցույց տալիս վնասվածներին:

Մոնձապի դեպքում մինչև կարգի պահպանության մասերի գալը, պետք է ջրջապատել խոձապի ոջախները, վորպեսզի այդ չտարածվի ջրջաններում. վերացվում է խոձապությունը:

Վարակված ոջախից դուրս բերված քաղաքացիների գույքը պոստերն ու պարեկները (պատրուկները) իրենց պահպանության տակ են վերցնում:

Սանիտարական ջոկերն ուղարկվում են վարակված ոջախները և այնտեղ վնասված մարդիկ հայտաբերելիս (իպրիտի գոլորջիներով վարակված) ուղարկում են նրանց լվացակայանք սանիտարական մշակման համար:

Փլվածքների յեղ ավերումների ժամանակ խումբն առաջին հերթին բնակչությանը դուրս է բերում քանդված տներից, ցույց է տալիս բժշկական անհետաձգելի ոգնություն վնասվածներին և տեղափոխում է նրանց Ա.Ռ.Ո. (առաջին ոգնություն կայանը): Սանիտարական ջոկերը դնում են քանդված տները վնասվածներին հայտաբերելու նպատակով և նրանց ոգնություն են ցույց տալիս: Հակահրդեհային ջոկերը մաքրում են անցկալները և փըրկում մարդկանց:

Թեթև վնասվածները, վորոնք կարող են ինքնուրույն քայլել խուժը-խումբ վորտըով ուղարկվում են Ա.Ռ.Ո., իսկ ծանր վնասվածներին տեղափոխում են պատգարակներով:

Հրդեհի դեպքում անմիջապես պետք է կատարել հետախուզական աշխատանք—հայտաբերելու համար հրդեհի աղբյուրը, վերացնելու համար այն և փըրկելու մարդկանց ու կենդանիներին:

վառվող ու ծխապատ շենքերից: Կրակը չտարածվելու համար ջրի հոսանք են բաց թողնում հարևան շենքերի և տանիքների կտուրների վրա, այդ բանի համար խմբի պետը առանձնացնում է հակահրդեհային ջրի մարդկանց մի մասին և ներգրավում նաև ինքնապաշտպանության խմբակին: Մարտիկները բարձրացվում են հարևան շենքի կտուրը ձեռքի տակ յեղած հրդեհաշիջման լիցիտներով և կայծեր ընկնելիս հանգցնում են:

Վարակման համակցված ոչախում խուճառն առաջին հերթին հանգցնում է հետքերը, դուրս է բերում բնակչությանը վարակման ոչախից մի ապահով տեղ և ցույց է տալիս փաստաթղթերին անհետաձգելի ոգնություն:

Վարակման ոչախից դուրս գալուց հետո խմբի անձնակազմը գործիքները թիթեակի գազահանման և յենթարկում և ապա ջրի առ ջրի ուղարկվում է դեպի լվացքատուն սանիտարական մշակման համար:

Ոչախում կոնտրոլ աշխատանքները վերջացնելուց հետո (նմուշի վերցնելն ու ուղարկելը լաբորատորիա քննության համար), մարտիկների մի մասը մնում է գույքը պահպանելու և վարակման համար անվտանգ դարձած ոչախում կարդ պահպանելու համար:

Կոնցրոլ հարցեր

1. Ի՞նչպես է կազմակերպվում աշխատանքը ՀՈՊ կայանում:
2. Քաղաքացիական գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների խնդիրները յերկրը հակողային պաշտպանության գործում:
3. Կայանի, ռայոնի, օբյեկտի շտաբի նշանակումն ու կազմակերպումը:
4. Աշխատավոր բնակչությունը ՀՈՊ ինչպիսի միջոցառումներ պետք է անցկացնի ոգնելու և աջակցելու համար այն միջոցառումներին, վորոնք անց են կացնում գերատեսչական կորդով:
5. Ի՞նչ ցո ցոնիշներ կարող են իրավունք տալ բնակիչություններին նրանց համարելու հետևողային պաշտպանության ամբողջություն:
6. Ի՞նչ խնդիրներ են դրվում ինքնապաշտպանության խմբակի վրա մարտական պատրաստության գործում:
7. Ի՞նչ մարտական խնդիրներ են վճռում ինքնապաշտպանության խմբակը:
8. Ի՞նչ են ինքնապաշտպանության խմբակները մարտական պատրաստության նոր մեթոդիկայի ելույթները:
9. Ի՞նչ նպատակ ունի ինքնապաշտպանության խմբակների ընդհանուր (սկզբնական) պատրաստությունը և ինչ գիտելիքներն են բաղկացած այդ պատրաստությունը:

10. Ի՞նչ պետք է տնի ինքնապաշտպանության խմբակի պետը պարտավորված լինի սկսելուց առաջ:

11. Ի՞նչպես կազմակերպել ներածական դրույքը և ի՞նչ բովանդակություն պետք է ունենա դրույքը:

12. Ի՞նչպես պետք է ուղղել սովորողների սխալները պարապմունքի ժամանակ:

13. Վճարող պետք է կատարել պարապմունքները վերլուծումը և ինչ պետք է արտացոլվի վերլուծման ժամանակ:

14. Ինչի՞ համար են նշանակվում ՀՈՊ տեղական մասերը:

15. Վճարող և վարակման ոչախը, մարտական ջրանոց:

16. Ի՞նչ եռապնիքի յե բաժանվում ՀՈՊ տեղական մասերի գործողությունները:

17. Քաղաքապետային խմբի դերը:

18. Ի՞նչ ստորաբաժանումներ են մտնում ջրանային խմբի կազմի մեջ և նրանց նշանակումը:

19. Ունիտար (միացական) ջրի նշանակումը:

20. Ի՞նչ ստորաբաժանումներ են մտնում ունիտար խմբի կազմի մեջ, նրանց նշանակումը:

21. Ի՞նչ աշխատանք է կատարում ունիտար խմբակը առաջին հերթին վարակման, ավերումների և փլվածքների ժամանակ, հրդեհի ոչախում, վարակման համակցված ոչախում:

Գ Լ Ո Ւ Ն 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ: Անհատական պաշտպանության միջոցներից մեկը հակադաշն է: Ներկայումս ամենից տարածված հակադաշն «ԲՆ» ռիտմի հակադաշն է: Այդ հակադաշնը բաղկացած է հակադաշնային տուփից՝ ներշնչման կախույրով, ծալավոր սեղանի խողովակից, յերեքնակից (տրոյնիկ), արտաշնչման կախույրից, ակնոցներով տեղիներ կտրվելից և պալուսակից:

Հակադաշնային տուփը լցված է ակտիվացված ածուխով, քիմիական կլանիչով և հակածխային գործով (Ֆիլտր): Տուփի ներսում ներքևում կա գմրիթաձև ցանց, իսկ վերևում— ուղիղ ցանց: Տուփի ներքևի կիսում գտնվում է կլանիչ, վերևի կիսում—գործիչ: Ձտիչի և կլանիչի միջև տեղավորված է զսպանակը, վորը պինդ սեղմում է հատիկակլանիչին, պահպանելով հատիկները յրվումից և մանրացումից: Տուփի հատակում կա անցք, նրա մեջ է հագցրած ներշնչման կախույրը, վորը կաղմըված է տեղիներ բոլորակից՝ մետաղի խցանի վրա, վորն ունի 6 անցք ներշնչելու ժամանակ ողն անցնելու համար: Տուփի վերևի

մատուցում բերանն է, վորի վրա ամրացվում է ծալավոր խողովակը:

Ծալավոր խողովակը պատրաստված է ռետինից և ծածկված է կտորով: Այդ խողովակը միանում է տուփի յերեքնակի հետ:

Արտաշնչման կափույրը ռետինն մի փոքրիկ տուպրակ է կտրված անկյուններով: Այդ տուպրակը տեղավորված է մետաղե շրջանակի մեջ, վորը պահպանում է տուպրակը վնասվածքներից: Արտաշնչման կափույրը հակազադի ամենախոցելի մասն է. այդ պատճառով նրա սարքինությունը վրա հարկավոր է լուրջ ուշադրություն դարձնել:

Ռետինն կորդակն ունի ակնոց ամուր ապակիներից, հագցված մետաղե շրջանակների մեջ: Ակնոցի վերևում կա «ռետինե մատ» (պտուկ), վորը ծառայում է ակնոցի ապակիները սրբելու համար, յերբ քրտնում են ապակիները:

Պայուսակը բրեզենտից է. նա ունի յերկու բաժանմունք. մեկը մեծ, մյուսը փոքր: Առաջին բաժանմունքում կա մետաղալարի տակառիկ, վորի վրա յե դրվում տուփը: Մետաղալարի տակառիկը ծառայում է նրա համար, վոր պայուսակի պարուսինը չփակի ներշնչման կափույրի անցքը և չդժվարացնի ոգի հոսանքը շնչառության ժամանակ: Ոգն ազատ անցնելու համար պայուսակի բաժանմունքների միջև միջնորմը չի հասնում հատակին: Փոքր բաժանմունքում պահվում է կորդակը և ծալավոր խողովակի մի մասը: Պայուսակը փակվում է կափույրով, վորը կոճակներով վեր է գցվում կամ փակվում է ժարմանդ ունեցող փոկով:

Հակազադը սովորաբար կրում են աջ ուսից գցած ձախ կողքին կոճակները իրենից հեռու: Հակազադը կրելու յերեք դրություն կա. 1) յերթային դրություն, յերբ պայուսակի կափույրը փակ է, կոճակը գցած է և հակազադն ամրացված չէ. 2) «պատրաստ» դրություն, յերբ պայուսակի կափույրը դուրս գցած է և հակազադը քուղի ոգնությունը ամրացված է իրանին. 3) «մարտական» դրություն, յերբ հակազադի կորդակը հագած է դեմքին:

Հակազադը ճիշտ և արագ հագնելու համար անհրաժեշտ են հագնելու ունակություններ և վորոշակի հետևողականություն: Ունակությունները ձեռք են բերվում մարզանքի միջոցով, իսկ հագնելու հետևողականությունը նվազներով:

Յերթային դրությունից հակազադը հագնում են 6 նվազով. 1) շնչառությունը պահել. 2) բանալ պայուսակի կափույրը. 3) աջ

ձեռքը տանել հակազադի պայուսակի ներսը և, ձեռքի ափով վերցնելով հալելուկից (պատրուկից), իսկ մատներով, կորդակից հանել պայուսակը և բացել. 4) վերցնել կզակի մասի հաստ յեզրերից մեծ մասերը դուրս, իսկ մնացածները - ներսից. 5) մոտեցնել դեմքին, դեպի առաջ դուրս բերել կզակը, մասնակցակց կորդակի մեջ և, մատերը շարժելով կորդակի յեզրնեքով ներքից վերև, բարձրացնել գլխարկը բութ և ցուցամատներով. հագնել կորդակը գլխին, հագնել գլխարկը, արտաշնչել և վերականգնել շնչառությունը. 6) հանել քուղը պայուսակից և հակազադն ամրացնել իրանին:

Յեթե քիմիական հարձակման սպառնալիք կա, ապա հակազադը պետք է դնել «պատրաստ» դրության մեջ: Պրա համար բացում են պայուսակի կափույրի կոճակները և, յեթև հարկավոր է, հարդարում են քաշիկի յերկարությունը և հակազադն ամրացնում են իրանին: Հակազադը «պատրաստ» դրությունից հագնում են նույն նվազների ոգնությունը, ինչ յերթային դրությունից:

Հակազադը հագնում են քիմիական տագնապի աղդանշանով կամ թն վարակման անմիջական վտանգի ժամանակ:

Ակնոցի ապակիները քրտնելու դեպքում, հակազադից ոգտը վերև ժամանակ հարկավոր է սրբել ռետինե մատով. դրա համար պետք է այդ մատը կռնել կորդակի ներսը և բութ մատով սրբել ապակին, ընդվորում աջ ապակին պետք է սրբել ձախ ձեռքի բութ մատով, իսկ ձախ ապակին աջ ձեռքի բութ մատով:

Հակազադը պետք է հանել հետևյալ հաջորդականությամբ. 1) աջ ձեռքով քիչ բարձրացնել գլխարկը. 2) ձախ ձեռքի բութ մատը տանել դիմակի տակ ականջների յետևից և շարժելով այդ մատը դեպի գլխի գագաթը միաժամանակ առաջ տալով, զգուշությունը դիմակը հանել գլխից. 3) հագնել գլխարկը. 4) դիմակը շուտ տալ ներսի կողմի վրա, լավորել չորացնել ապակիները թաշկինակով կամ լաթով, սրբել ապակիների շրջանակները, վորից հետո մի առ ժամանակ թողնել բաց դրությամբ չորանալու համար (ձեռքերը տանել կոնատակը). 5) ծալել դիմակը մի անգամ (յերկարությամբ) և այնուհետև կրկնակի (ակնոցը պետք է ծածկված լինի դիմակով յերկու կողմից) ծալել հալելուկի միացման տեղում և աջ ձեռքով դնել պայուսակի մեջ մինչև հատակը:

Յեթե հակազադը «պատրաստ» դրության մեջ է մնում, ա-

պա պայուսակի կափույրը չպետք է կոճկել, իսկ յեթե հակա-
զազը յերթային դրության պետք է բերել, այն ժամանակ
հարկավոր է քանդել քուղը, հավաքել և դնել պայուսակի մեջ.
պայուսակի կափույրը կոճկել: Յուրա յեղանակին, յեթե կոր-
դակը հանելուց հետո հարկավոր է յերկրորդ անգամ հագնել,
ապա հանձնարարվում է կորդակը դնել կրծքի վրա հագուստի
տակ, վորպեսզի տամկությունից շատ չսառչի ջնչառության կա-
փույրը:

Հակազազը պետք է հանել միայն համապատասխան պետի
կարգադրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՆԺՆԱԿԻ ԿԱՆՈՆԵՐԸ,
ՆՈՆԵՐԸ, Հանձնված հակազազը պետք է խնամքով պահել և ըզ-
գուշությամբ վարվել նրա հետ: Միայն այս կանոնները պահպա-
նելով, հակազազը կարող է պաշտպանության հուսալի միջոցը
լինել: Անուշադիր վերաբերմունքի դեպքում, ամենաանհաշտ
անավաճ անգամ, ինչպես կորդակը կամ խողովակը ծակելը,
անպետք են դարձնում հակազազը պաշտպանության համար:
Հակազազը լավ խնամելու համար անհրաժեշտ է պահպանել հե-
տևյալ կանոնները.

1) Չպահել հակազազը խիստ սափացրած առարկաների մոտ
(վառարանների, դուրըշիով խողովակների մոտ և այլն) — այդ
աղում է կորդակի ուտիսի և կափույրի վրա:

2) Չպահել խոնավ լիցի ցուրտ տեղերում, վորովհետև անոթը
առաքելու է կլանում և հակազազը կորցնում է իր կլանելու
ընդունակության մի մասը թե՛ նկատմամբ, մետաղե մասերը
կարող են ժանգոտել, իսկ մնացած մասերը ծածկվել բորբոսով:

3) Պահպանել հակազազը ուժեղ հոսմներից, չնետել, չդնել
զլիսի տակ, վորպեսզի կլանիչ գանգվածը չփոշիանա, չծածկել և
չտրորել տուփը:

4) Պայուսակի մեջ չդնել վոչ մի կողմնակի իր, վորովհետև
այդ իրերով կարելի չէ փչացնել կորդակը կամ արտաշնչման
կափույրը:

5) Յեթե պայուսակը բռնվել է անձեպից, ապա հենց պա-
շին հնարավորության դեպքում պետք է հանել հակազազը և չո-
րացնել պայուսակը:

Պահելու և խնամելու այս կանոնները կատարելով, դեռևս
չի կարելի միանգամայն համոզվալ լինել, վոր հակազազը միշտ
սարքին է: Հակազազից ոգտվելիս, մանավանդ մարզանքի

ժամանակ, նա կարող է աննշան վնասվածքներ ստանալ, և յեթե
այդ վնասվածքները միան առանց հայտարարելու, այն ժամանակ,
այդպիսի հակազազից ոգտվելիս, վարակված մթնոլորտում կա-
րելի չէ թունավորվել:

Հակազազի սարքինության աստիճանը վորոշելու համար
պետք է յենթարկել նրան սիստեմատիկ զննության. յերբ զն-
նության ժամանակ վորևե անսարքություն է նկատվում, այն
ժամանակ պետք է վերացնել այդ անսարքությունը վերանորոգ-
ման միջոցով, յեթե այդ հնարավոր է, հակառակ դեպքում հա-
կազազը պետք է փոխարինել նորով:

Հակազազի մասերը	Այնպիսի վնասվածքներ, վորոնց դեպքում հակա- զազով չպետք է թույլ տալ աշխատելու վարակված մթնոլորտում	Չննության կանոնները
Կորդակ	Ծակվածքներ և պատու- վածքներ	Յերկու ձեռքը ափերով տանել կորդա- կի ներսն այնպես, վոր մեկ ձեռքի յեղը շփվի ծոծրակի կարին. իսկ մյուս յեղը — կզակի կարին. թեթևակի ձգել սաղա- վարտը և դնել յերկու կողմից: Հետո դնել կորդակի լույսի դիմաց, կամաց — կամաց ձեռքի մատները մեջ հավաքե- լով ամբողջ կորդակը և թեթևակի ձգելով Արգելվում է յեղունդներով դիպչել կորդակին քերվածքներից խուսափելու համար:
Ալնոց	Չարդված կամ ճաքած են սալակները	Արտաքին տեսքով կարելի չէ հայտա- բերել:
Արտաշնչ- ման կա- փույր:	1. Աննշան պատվածք կամ ծակեր:	1. Արտաքին զննությամբ:
	2. Ող և բաց թողնում նեղնչման ժամանակ:	2. Բերանն առնել յերեքնակի հակե- լուկը, պինդ սեղմել ձեռքի ափով ներ- քեր կափույրը կամ մատերի միջև պինդ սեղմել ծալավոր խողովակը և նեղնչնչ: Յեթե սարքին են կափույրը և ծալավոր խողովակը, ապա ողը չպետք է անցնի: ԲՏ—3 հակազազը զննելիս (քաղաքացիական տիպ—3) պետք է բե- րանին պինդ սեղմել վոտնի մանիկը և նեղնչնչել:

Հակագաղի բոլոր անսարքությունները դեպքում անհրաժեշտ է դիմել ընկերոջ ոգնությանը, մասնավոր ներշնչման կափույրը հանելու և հակագաղը նորով փոխարինելու ժամանակ։

Վարակված մթնոլորտում հակագաղը փոխարինելու ժամանակ պետք է այսպես վարվել։

1) Շնչառությունը պահել, դեն նետել անսարք հակագաղը և վերցնել սարքին հակագաղի կորդակը, պայմանով, յեթե այն պատրաստել է ընկերը, յեթե հարկ է լինում յուրազնալ առանց ընկերոջ ոգնության, ապա ինքը պետք է բանա պայուսակը և հանի կորդակը մեկ ձեռքով շոշափելով աշխատել մինչև անսարք հակագաղի դեն նետելը։

2) Հանել գլխարկը և հագնել նոր հակագաղի կորդակը։

3) Սեղմել արտաշնչման կափույրը և ուժեղ արտաշնչել, ընդվորում արտաշնչած ողորդուրս կգա ականջների մոտ և ներա հետ միասին նաև թն, վորն ընկել և կորդակի տակ հագնելու ժամանակ։ Թն ավելի լավ մաքրելու համար կորդակի տակից արտաշնչումից հետո ներշնչել խողովակի միջով, բերանը վերցնելով յերեքնակի հավելուկը, և նորից նույնպիսի արտաշնչում կատարել։ Երբ հնարավոր է կորդակը հագնելուց հետո արտաշնչել, ապա ներշնչելու համար բերանը պետք է առնել յերեքնակի հավելուկը և հետո արտաշնչել, ինչպես ցույց է տրված։

4) Հանել հին հակագաղի քաշիկը և հագցնել նորի քաշիկը կամ պայուսակից հանել հին հակագաղը, իսկ նոր հակագաղի տուփը դնել պայուսակի մեջ։

Հակագաղը փոխարինելու համար և վարակված մթնոլորտում անսարք հակագաղից ոգտվելու ժամանակ հարկավոր են վարժություն ու մարզանք, այդ մարզանքը պետք է կատարել ծխացման կամերաներում սկզբում փոքր համակիներով և աստիճանաբար համակներով և աստիճանաբար համակներով և աստիճանաբար պետք է հասցնել մինչև ծխացմանը կամերային պայմաններում թուլատրելի չափին։

Մասնագիտական խմբերի հետ պարապմունքներ անցկացնելու ժամանակ նրանք մարզվում են այն աշխատանքի մեջ, վորը հարկ կլինի նրանց կատարել ողային հարձակման պայմաններում։ Որինակ՝ քիմիական խմբերին պետք է մարզել վոչ միայն հակագաղեր հագած աշխատելու մեջ, այլև հագուստներ հագած՝ տարբեր գազանման աշխատանքներ կատարելու մեջ։ հատկապես այդպիսով են ձեռք բերվում հագուստը ճիշտ հագ-

նելու և հանելու ունակությունները։ Սանիտարական խմբերը վարժվում են վիրավորներին անդափոխության մեջ և սկզբնական ոգնություն ցույց տալու մեջ։ որինակ՝ վիրավորության, կարգը պահպանելու, հակագաղ հագած իր ծառայությունը կատարելու մեջ և այլն։

Հակագաղ հագած մնալու ժամանակը (հանգիստ դրության և աշխատանքի մեջ) միջին հաշվով պետք է հասցնել վոչ պակաս, քան 2 ժամի։

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԾԽԱՅՈՒՄ։ Կամերային ծխացման հիմնական նպատակն է՝ հավատ ներշնչել մարդկանց մեջ, վոր իրոք հակագաղը ունի պաշտպանելու հատկություններ, ստուգել կորդակի հարդարման ճշտությունը և հակագաղի մասերի միացման հերմետիկությունը։

Ծխացումը սովորաբար կատարվում է այն ժամանակ, երբ արդեն կարողանում են ճշտորեն ոգտվել հակագաղից, բայց և չի կարի լի բացառել նաև այն մարդկանց ծխացման հնարավորությունը, ովքեր տակավին չեն տնցել սկզբնական պատրաստությունը։ Կամերային ծխացումը կատարվում է հատուկ այդ նպատակի համար կառուցված կամ այդ նպատակի համար հարմարեցրած շենքերում։ Կամերան միջին հաշվով հատկացվում է 20—30 մարդու համար, մեկ քառակուսի մետր հատակով յուրաքանչյուր մարդու համար։ Կամերայի բարձրությունը առնվազն պետք է լինի 2 մետր։

Ծխացումը կատարվում է փոքրիկիկով։ Ծխացման համար անհրաժեշտ է ունենալ սրվակով քլորպիկրին խցանած, 50 և 100 խորանարդ սանտիմետրանոց չափաբաժակ, պրիմուս կամ կերոսինակ և տապակ (թավա) քլորպիկրինը գոլորշիացնելու համար։ Բացի դրանից, անհրաժեշտ է ունենալ ջուր, սապոն և պրիչ։

Կամերան քլորպիկրինով լցնելու ժամանակ պետք է ներկատի ունենալ 0,2 խորանարդ սանտիմետր քլորպիկրինը կամերայի ծավալի մեկ խորանարդ մետրի համար։ Յեթե որինակ կամերան ունի 90 խորանարդ մետր, ապա ող կամերան քլորպիկրինով լցնելու համար կպահանջվի $90 \times 0,2 = 18$ խորանարդ սանտիմետր քլորպիկրին, Նշանակված քանակը պետք է չափել չափաբաժակով և շոգիացնել տաքացրած տապակի վրա։ Հայտնվում են սպիտակ ծանր գոլորշիներ։ Յեթե քլորպիկրինից, տապակի վրա լցնելիս, կգոյանան մուգ շագանակագույն գոլորշիներ,

ապտ պետք է լցնելը դստարեցներ, վորովհետև այդ գույնի գու-
լորշիները ցույց են տալիս, վոր քլորպիկլինը քաջքայլում է,
լուծվում է: Այդ նշանակում է տապակը շատ է տաքացել, պետք
է քիչ պահեցնել: Տապակը հալասարաչափ տաքացնելու և չթող-
նելու համար, վոր նա արագ և չափից ավելի տաքանա, կարե-
ւի յե ոգտվել ավազով գործիքով: Այդ գործիքը կազմված է յեր-
կաթե տապակարանից, վորի վրա շաղ են տալիս մի շերտ ա-
վազ, մոտավորապես 1—1,5 սանտիմետր և վերևից դնում տա-
պակը շոգիացման համար: Քլորպիկլինը գուլորշիացնելու հա-
մար նախապես պետք է լցնել վոչ թե ամբողջը միանգամից,
այլ կաթիլ-կաթիլ: Մուգ շագանակագույն գուլորշիներ գոյանա-
լու դեպքում թողնում են վոր տապակը սառչի և հետո նորից
են փորձում: Յերը յերևում են սպիտակ կամ անգույն գուլորշի-
ներ, այն ժամանակ պետք է լցնել ամբողջ քլորպիկլինը:

Ծխացման համար յեկած մաքրիկ տեղավորվում են կամե-
րայի քամու ուղղությամբ, բաժանվում են խմբերի, և դեկավար-
ները նրանց առաջնորդում են պարապմունքի, բացատրելով նը-
րանց ծխացման կանոնները և թե ինչպես պետք է իրենց պա-
հեն կամերայում: Յերը մոտենում և ծխացման հերթը, խումբը
հաջնում է հակադադերը: դեկավարն անպայման ստուգում է
հակադադը հագնելու ճշտությունը և խմբակի հետ մանում է
կամերան: Ով կամերայում յեղած ժամանակ իրեն վատ զգա,
ապա անմիջապես դուրս է գալիս: Ընդվորում խմբի դեկավարը
պարտավոր է ոգնել դուրս յեկողին, վոր նա շտապով հեռանա
կամերայից: Ժամանակից շուտ կամերայից դուրս գալու դեպքում,
դեկավարը պարտավոր է բացատրել դուրս գալու պատճառը, վե-
րացնի այդ պատճառը, վորից հետո դուրս յեկածը նորից ներս է
մտնում: Կամերայից դուրս գալուց հետո մարդիկ չպետք է կու-
տակվեն իրար գլխի, այլ մի առ ժամանակ (5—10 րոպե) պետք է
դասավորվեն ցրված, վորպեսզի քամահարվի հագուստի վրա մը-
նացած թև:

Ծխացման ժամանակ պարտադիր է սահմանել որապահույնուն
բժեկական կազմից բոլոր անհրաժեշտ պարագաներով: Յեթե ծխաց-
ման համար յեկածներից վորեւ մեկը հայտնում է թե ինքը իր
առողջական վրությամբ չի կարող յենթարկվել ծխացման, այն
ժամանակ նրան ուղարկում են որապահ բժիշկի կամ բժիշկի օգ-
նակների մոտ, վորը տալիս է իր յեղրակացությունը:

ՇԵՆՔԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ՀԱԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՏԵՍԱԿԵ-
ՏԻՑ: Վոչ միշտ և վոչ բոլորը կարող են ունենալ հակադադեր:
Կան բնակչության այնպիսի խմբեր, ինչպես՝ ծերունիները, հի-
վանդները, ծծկեր յերեխաները և այլն, վորոնք չեն կարող ոգտը-
վել անհատական պաշտպանության սովորական միջոցներից:
Այդպիսի դեպքերում թև պաշտպանվելու համար կան դադապա-
տաններ: Գաղապատանները հատուկ կառուցված շենքեր են ա-
մուր ծածկոցներով, վորոնք հնարավորություն են տալիս պաշտ-
պանվելու ուղեբերից և թև ներս թափանցելուց: Բայց, իհարկե,
հնարավոր չէ այդպիսի գաղապատաններ կառուցել ամբողջ բը-
նակչության համար: Դրա համար հարկավոր է գետնի տակ ամ-
բողջ բնոտնե քաղաքներ կառուցել, վորոնք նույնպես դժվար
թե լիովին պաշտպանելին բնակչությանը, վորովհետև ամենաու-
ժեղ ծածկոցի դեպքում ել կարելի յեր գործադրել ել ավելի ու-
ժեղ ուղեբեր:

Այդ, իհարկե, չի նշանակում, վոր վոչ մի գաղապատան չը-
պետք է կառուցել: Պետք է ասել, վոր ամեն մի շենք կարող է
պաշտպանվել բեկորներից, պայթույնի ուժից և վորոշ սարքավոր-
ման դեպքում պահպանել նաև թևից:

Դրա համար, յուրաքանչյուր տան մեջ, յուրաքանչյուր բը-
նակարանում կարելի յե առանձնացնել հատուկ սենյակներ: Ա-
մենից հարմար են նկուղները, մառանները, քիչ լուսամուտների
ունեցող սենյակները և այլն: Այդպիսի սենյակներում և շենքե-
րում բոլոր ճեղքերը պետք է լցնել ու փակել խժուժով, սվաղել
ցեխով: Պատերն ու առաստաղները պետք է ծածկել հաստ սվա-
ղով (ցեմենտով) և ներկել յուղաներկով թեկուզ հատակից յեր-
կու մետր բարձր: Հատակների ճեղքերը լցնում են ու ներկում:
Յեթե հնարավոր է, ավելի լավ է հատակը ծածկել լինոլեումով:
Լուսամուտների շրջանակները պիտք ծածկել և ճեղքերը փակել:
Ապակիները լավ պնդացնել: Ցանկալի յե լուսամուտներին ունե-
նալ լերկտակ փեղկեր: Լուսամուտների համար պետք է ունենալ
ամուր փակվող փեղկեր կամ վարագույններ: Դռները նույնպես
պիտք փակել, ճեղքերը լցնել և սվաղել:

Այսպես խնամքով պաշտպանված շենքը դրսից ողջ ներս չի
թողնում և այդպիսով պաշտպանում է թև ներթափանցումից:
Սակայն քանի վոր ողջ չի թափանցի ներս, ապա մարդիկ հար-
կադրված պետք է լինեն շնչել միայն ներսի ողով: Այդ ողջ պետք
է պահել մաքուր: Ամեն մի մարդու համար մեկ ժամում պահանջ-

ԻՆԲՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒ- ԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԽՄԲԱԿԻ ՀԱՎԱԳԵԼԸ «ՈՂԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ» ԱԶԳԱՆՇԱՆՈՎ:

«Ողային տաճանապ» աղանջանով ինքնապաշտպանության խմբակի անձնակազմը հավաքվում է հավաքատեղը և պատրաստվում է դադահանման գույքը: Առձեռն միջոցները դադահանման համար (գոգավոր թխակներ, քլորակերով արկղներ, լորակի վրձինները, դույլերը ցնցուղները և այլն) տեղավորում են առաջուց հատկացված տեղում:

Ինքնապաշտպանության խմբակի պետը գույքը պատրաստելու ժամանակ ստուգում է արդյոք խմբակի ամբողջ կազմն է ներկայացել թե՛ վոչ:

Ցեթե խմբակն ունի ԹՆ-ից պաշտպանվելու միջոցներ (կոշիկներ, հակիպրիտային հագուստ և այլն), ապա մարտիկները գույքը պատրաստ դրուժյան բերելով, հագնում են հակիպրիտային հագուստը (չհագնելով կնդուղը և ձեռնոցները), հակազազերը զենում են «պատրաստ» դրուժյան, մտնում են շենքի հատկացված սենյակներից մեկը, վորտեղ և սպասում են հետագա կարգադրուժյանը:

Հանրային կտրգը պահպանելու համար խմբակի պետը ինքնապաշտպանության խմբակի կողմից սպասարկվող բնակմիության տերրիտորիան է ուղարկում պարեկներ 2-ական մարդուց բաղկացած: Պարեկների քանակը կախված է սպասարկվող տերրիտորիայի մեծությունից և պարագայից: Բացի դրանից, պոստեր են կարգվում նախորոք նշանակված տեղերում (յուրաքանչյուր պոստում մեկական մարդ, բալերում, գլխավոր նախամուտերում):

Սոցոր բնակավայրերում, յեթե ինքնապաշտպանության խմբակն սպասարկում է մեկ տուն, ապա բավական է առանձնացնել միայն մեկ պարեկ յեվ մեկ պոստ գլխավոր նախամուտի մոտ:

Հակահրդեհային ռետկեսից շենքերը պահպանելու համար պոստեր են դրվում միջանցքներում, սանդղդների հարթակներում, հրդեհաշիջ միջոցների մոտ (հրամարիչներ, հրդեհային կրակներ և այլն), ըստ հնարավորին նայել լայնիմաստով:

Վում է 2 խորանարդ մետր մաքուր ող: Այդ պատճառով հարկավոր է հաշվել թե՛ վորքան ող կա սենյակում և աղետեղ տեղավորել ախքան մարդ, վորքան սենյակի ողն է թույլ տալիս: Գազապատաններում խորհուրդ է տրվում չծխել և չվառել մոմ կամ կերոսինի լամպա, վորովհետև դրանք կլանում և փչացնում են ողը:

Բացի այս միջոցառումներից, վոր ցանկալի յե իրականացնել յուրաքանչյուր տանը, յուրաքանչյուր բնակարանում, վորոնք դասավորված են վտանգի յենթակա շրջանում, հարկավոր է նախատեսել նաև այլ պարտադիր միջոցառումներ, ինչպես որ ինակ՝ պատերազմի ժամանակ լուսամուտների ապակիներին պետք է խաչաձև կպցնել թղթի շերտեր, վորպեսզի պայթյունների ժամանակ ապակիները պահպանվեն շարվելուց: Բոլոր դռի լուսամուտների համար պետք է ունենալ փեղկեր, կամ շտորներ, վորպեսզի լույսը չընկնի փողոցը, բակը: Յուրաքանչյուր բնակարան պետք է ունենա ջրի պաշար: Անհրաժեշտ է նույնպես ունենալ լավ ծածկոցներ հագուստի, սպիտակեղենի և ամանների համար, դրա համար պատրաստելով պինդ փակող բանկաներ, արկղներ, սնդուկներ և պահարաններ:

ԿՈՆՏՐՈՂ ՀԱՐՑՆԵՐ

1. Ի՞նչ գլխավոր մասերից է կազմված «ԲՆ» սխեմի հակազազը և վորն է այդ մասերի նշանակումը:
2. Ի՞նչպես պետք է հագնել հակազազը յերթային դրուժյունից:
3. Ի՞նչպես են հանում հակազազը:
4. Ի՞նչպես պետք է պահել հակազազը:
5. Հակազազն ի՞նչպիսի տնտաբքությունների գեպըում չի պաշտպանում թունավոր նյութերից:
6. Ի՞նչպես ոգտվել հակազազից յերբ նա ֆրասվել է:
7. Թունավոր մթնոլորտում-անսարք հակազազն ի՞նչպես փոխարինել արդյուն հակազազով:
8. Կամերային ծխացման նշանակումը:
9. Ի՞նչպիսի թն են ոգտագործում ծխացման համար:
10. Ի՞նչ քանակով քլորպիրին են ծախսում կամերան լցնելու համար:
11. Ծխացման կարգը:
12. Կամերայում ֆրակու տեղադրությունը:
13. Ի՞նչ շենք կարելի յե հարմարեցնել թն պաշտպանվելու համար:
14. Թն պաշտպանվելու համար սենյակը հարմարեցնելու ի՞նչ միջոցառումներ կան:

Կոլեկտիվային փոքրիկ զեղատներ ժողովում են ստեղծարակա՞ն պոստեր (մեկ կամ յեկու մարդ յուրաքանչյուր պոստում)։

Բնակարանները բնակիչների բացակայության դեպքում պոստ ե զբոլում նույն գոյքը պահպանելու համար։

Անաշխատունակներին և հսկողութան յենթակա մարդկանց պետք ե տեղավորել նախորոք հատկացված տեղերում, վորտեղ հսկողութունն ապահովելու համար պոստ ե զբոլում։

Բնակիչներին ժամանակին ողային հարձակման մասին հայտնելու համար զբոլում են ծանուցման պոստեր։ Ծանուցման պոստը միաժամանակ հանդիսանում ե նաև քաղաքամասային շտաբի հետ կապի պոստ։ Կապը պահպանվում ե լրատարների միջոցով կամ ոգտագործում են տվյալ բնակմիության հեռախոսներից մեկը։

Ինքնապաշտպանության խմբակի պետը ստուգում ե պատրաստականութունը (պոստերի տեղավորումը) և ապա ինքը կապավորի հետ միասին տեղավորվում ե այնպիսի տեղում, վորտեղից իրեն հարմար ե դեկավորել խմբակի աշխատանքը։ Պոստերի համար առանձնացված բոլոր մարտիկները պարտավոր են իմանալ խմբակի պետերի կեցած տեղը և կապ հաստատել նրա հետ։

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ՊՈՍՏԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ։ Հանրային կարգը պահպանելու պոստերի համար առանձնացված ինքնապաշտպանության խմբակի մարտիկները, պոստ գալով ձեռնարկում են հետևյալ միջոցառումները։

1) Հետեվում են քաղաքացիների կողմից ողային տագնապի ազդանշանով սահմանված կանոնների կատարմանը։ Գիշերն ըստուգում են լուսաքողարկման միջոցների կիրառմանը (ժամանակին լույսի մթնացնելը) և ՀՈՊ մյուս միջոցառումների կիրառմանը։

2) Հետևում են, վոր անցուղարձ անող քաղաքացիները կանգ չառնեն այնտեղ, վորտեղ այդ կարող ե արգելք հանդիսանալ շարժմանը, և մարդիկ ավելորդ տեղը չկուտակվեն։

3) Կանխում են խռնվածութունը, խուճապը, բոլոր սանդուխների հարթակները, բոլոր անցքերը և միջանցքները պետք ե ապահովված լինեն հսկողությամբ, վորպեսզի այդ տեղերում չլինեն խռնվածութուն, հրհրոց, վազվզոց իրարանցում։

4) Ապահովում են կանոնավոր շարժումը ե անցուղարձ անողներին տեղավորումը առաջուց հատկացված սենյակներում, բացում են դարպասները, նախամուտքերը։

5) Խուճապ առաջանալու դեպքում ձեռքակալում են զբոլողներին և խուճապային լուրեր տարածողներին և հանձնում նրանց մոտակա պոստային միլիցիոներին։

6) Ողային հարձակման հետևանքով վորեն վնասվածք հայտարարելու դեպքում (վարակում, ավերում, վնասվածքներ ստացողներ և այլն) անմիջապես դեկուցում են այդ մասին ինքնապաշտպանության խմբակի պետին։

Իմիակա՞ն ուղմբեր պայթելու ժամանակ բնակչությանը հայտնում են քիմիական վտանգի մասին բնակարաններում ազդարարության միջոցով։ Ազդարարության համար կարելի յե գործադրել յերկաթի կտոր, ռելս և ազդարարության առձեռն ալ միջոցներ։ Թե ինչպես պետք ե գործադրել ազդարարությունը, այդ մասին պետք ե նախորոք մանրամասն հրահանգի նրանց խմբակի պետը։

Հակահրդեհային տեսակետից շենքերի պահպանության համար առանձնացված մարտիկները, մինչև առաջուց նշանակված պոստ գալը, պարտավոր են ստուգել հանրային ոգտագործման բոլոր տեղերում (միջնացքներ, հարթակներ) յեղած հրդեհաշիջ միջոցների պատրաստականությունը, այդ ստուգմանը ներգրավելով տան բնակիչներին։

Դեռևս խաղաղ ժամանակից ինքնապաշտպանության խմբակի մարտիկների պարտականությունների մեջ ե մտնում հրակել վառարանների սարքինությանը, ձխանների մաքրությանը կրանների սարքինությանը, հսկել, վորպեսզի տակառներում միշտ ջուր լինի, վոր տանը ավազի պաշար լինի, վոր պահունի յեղքերը բացվեն։

Հրդեհ ընկնելու դեպքում մարտիկները միջոցներ են ձեռք առնում հրդեհ ծագած տեղում հանգցնել հրդեհը, ոգտագործելով ձեռքի տակ յեղած հրդեհաշիջ միջոցները (հրամարիչներ, ավազ և այլն) և թույլ չեն տալիս, վոր հրդեհը տարածվի։ Հրդեհի մասին անմիջապես հայտնում են ինքնապաշտպանության խմբակի պետին։

Տանիքում կարգված հրդեհային պոստի հիմնական խնդիրն ե՝ հսկել տերմիտային խմբերի պայթելուն, անմիջապես միջոցներ ձեռք առնել հանգցնելու տաք տերմիտը ավազով, բահերով (տերմիտային ուղմբերի հանգցնելու մասին կարգա ներքևում)։

Սանիտարական պոստերի համար առանձնացված մարտիկները, մինչև պոստ գալը, պարտավոր են ստուգել ջրցանային հարմարությունները, վորոնք կարող են ծառայել թն զնամվածների լվացման համար:

Ծանուցման պոստերի համար նշանակված մարտիկները, մինչև պոստ գալը, պարտավոր են շրջել սպասարկման յենթակա բնակմիության (տան) բնակարանները, բնակչությանը հայտնելու ողային հարձակման մասին, դրան ներգրավելով բնակվողների ակտիվին, մանուկներին և այլն: Յեթե բնակարանները ադիոֆիկացիայի յեն յենթարկված, ապա ողային հարձակման մասին բնակչությանը պետք է հայտնել ռադիոյի միջոցով: Առաջին հերթին այդ մասին պետք է հայտնել այն բնակիչներին, վորոնք գրանցված են ՀՈՊ տեղական մասերում:

Ծանուցման պոստերի համար նշանակված մարտիկները պարտավոր են խմանալ քաղաքամասի շտաբի, ունիտար խմբի և մոտակա այն հիմնարկությունների հեռախոսները համարները, վորոնք սպասարկում են բնակչության պաշտպանության ՀՈՊ քաղաքամասի ՀՈՊ սխեման:

Վորպես կանոն, հեռախոսի մոտ, վորտեղ որապահություն է նշանակվում, պետք է փակցնել քաղաքամասի շտաբի և մերձակա ունիտար խմբի հեռախոսների համարները ցուցակը:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ՊԵՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՄԲԱՆԵՏՄԱՆ ՍԿԶԻՆ: Ինքնապաշտպանության խմբակի պետը պոստերից ղեկուցողի ստանալով սպասարկվող տերրիտորիայում վարակումների մասին, անմիջապես միջոցներ է ձեռք առնում վերացնելու հետևանքները:

Նա պետք է հաշվի առնի, թե տվյալ պահին վճր միջոցառումներն են ավելի անհրաժեշտ, ինչը կարող է արգելք հանդիսանալ ինքնապաշտպանության խմբակի աշխատանքին և իր ուժերը կրավարբաթն արդյոք հետևանքները վերացնելու համար:

Լուսաբանելով պարագան և վճիռ ընդունելով աշխատանքի կարգի վերաբերյալ, խմբակի պետը անձնակազմին ծանոթացնում է ստեղծված դրություն հետ, վորքան իրեն և հայտնի, և գործի յե ղնում խմբակը անհետաձգելի աշխատանքները կատարելու համար:

Այն դեպքում, յերբ ինքնապաշտպանության խմբակի ուժերով միայն հնարավոր չե վերացնել հետվանքները, խմբակի պետը այդ մասին ղեկուցում է քաղաքամասի պարետին հետո:

խոսով, ցույց տալով վարակումների չափերն ու բնույթը: Վարակման մասին ղեկուցյցը հաղորդվում է մոտավորապես հետևյալ ձևով.

«Բնակչության պաշտպանության (ԲՊ) խմբակ—53, նետված է մոտ 8 քիմիական և 3 ֆուգասային, քանդված է մեկ առևն Լերմոնտովյան փողոցում, 10 թիթե վիրավոր, 8 ծանր, իր ուժերով ԲՊ չի կարող բավարարել»:

Յեթե քաղաքամասային շտաբը խմբակի տեղից մոտ է գրանվում, ապա ղեկուցյցն ուղարկվում է վոտավոր լրատարի միջոցով:

Այն դեպքում, յերբ բնակմիության (տան) սպասարկվող տերրիտորիան մոտում է ունիտար կամ շրջանային խմբի սպասարկման տիրիտորիայի մեջ, խմբակի պետը այդ մասին հայտնում է խմբի ակտին:

ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

1. Վճրն է գործողությունների համար ինքնապաշտպանության խմբակի պատրաստության ելությունը:

2. Ի՞նչ տեղերում են դրվում պոստերը բնակմիության սպասարկվող տերրիտորիայում, ի՞նչ պոստեր են, նրանց դիրքը:

3. Ի՞նչպես է վարվում ինքնապաշտպանության խմբակի պետը, յեթե աբանետման հետևանքները վերացնելու համար չեն բավականացնում խմբակի ուժերն ու միջոցները:

Գ Լ ՈՒ Խ V

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆԲԸ ԶԱՆԱԶԱՆ ՎՆԱՍՎԱՄ ՈՋԱԽՆԵՐՈՒՄ

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԱԿԻՄԱՆ ԴԵՊԳՈՒՄ: Կայուն թն գաղափարման համար գործադրվող բոլոր նյութերը բաժանվում են 3 խմբի.

1) Չեզոքացնողներ,

2) Լուծիչներ յեվ

3) Ոժանդակ նյութեր:

Առաջին խմբին են պատկանում քլորի կամ շպարի կիրը—սպիտակ փոշի յե, ունի քլորի ուժեղ հոտ: Ողում, յերբ տամկություն կա քլորակիրը արագ կորցնում է քլորը. այդ պատճառով պետք է պահել լավ ծրարված: Պահելու համար ամենից հարմար ծրարումը կարող են լինել արկղը կամ տակառը պինդ

հարգարված կափարիչներով, ներսը պատած ցինկի թիթեղով կամ պերգամենտով: Քլորակիրը պետք է պահել չոր և սառը սենյակ-ներում: Կիրը մի քանի որում կարող է անպետքանալ, յեթե ա-մանի յերեսը բաց է կամ պինդ չի ամրացրած: Բաց տակառում կիրը պահելու համար, հարկավոր է ավազ կամ թեփ լցնել վրան: մինչև 10 սանտիմետր շերտով: Թաց կիրն անպետք է աշխա-տանքի համար:

Գազահանման աշխատանքների համար քլորակիրը գործադրու-վում է թե չոր և թե ջրի հետ խառը դրությամբ: Ջրի հետ խառ-նելով՝ կարելի չէ ստանալ քլորակրի շփոթ (մեկ մաս ջուր, 4—5 մաս քլորակիր) և կրաքլորի կաթ (մեկ մաս քլորակիր, 4—5 մաս ջուր):

Քլորակրի շփոթը և կրաքլորի կաթը պետքական չեն պո-հելու համար, դրա համար պատրաստում են, յերբ կարիք է լի-նում:

Յերկրոդ խմբին են պատկանում լուծիչները—սկիպիտարը, կերոսինը, բենզոլինը և մյուս հանքային յուղերը: Ամենից շատ գործածական լուծիչը կերոսինն է:

Յերկրոդ խմբին պատկանում են հողը, մոխիրը, տորֆը, թեփը, սրանք գործադրվում են վարակված տեղերը ցանելու հա-մար, վորից հետո այդ նյութերը հավաքում և այրում են:

Գազահանման համար գործադրվող մեղքի տակ յեղած գործի-նքն ու նրանց պահելը: Ընտանիքում գործադրվող գործիքները միշտ կարելի չէ հարմարեցնել անհետաձգելի աշխատանքների համար վարակման ոջախում: Այդ գործիքների թվին են պատկա-նում.

1) Դուլներ. սրանցով կարելի չէ կրել սառը կիր և տաք ջուր գազահանման համար:

2) Յերկաթե քիեռ. ոգտագործվում են կիրը ցանելու համար վարակված մակերեսների վրա, կարելի չէ ոգտագործել ձագար-ները լցնելու համար, և վորոնք առաջանում են քիմիական ուղեքերի պայթույթից:

3) Փոք փոցխեռ. կարելի չէ ոգտագործել մակերեսները, փուխը գետնից փողոցները փոցխելու համար՝ գազահանման պը-րոցեսն արագացնելու համար:

4) Պարսեզի ցնցուղներ. ոգտագործվում են գազահանած մակերեսները ջուր ցանելու համար, վորպիով լարագանա գա-զահանման պրոցեսը. կարելի չէ ոգտագործել քլորակրի կաթով, լուծիչներով գազահանելու համար և այլն:

5) Փայսե քիեռ. գործադրվում են վարակված մակերեսի վրա քլորակիր շաղ տալու համար. դրանցով կարելի չէ հեռացնել վարակված ձյունի շերտը:

6) Մանկական օալակներն ու սահմակներ. կարելի չէ ոգ-տագործել դեպի վարակված ոջախը քլորակիր կրելու համար, վարակված հողը կամ ձյունը կրել թափելու համար:

7) Տակառիկներ. նրանցով կրում են տաք ջուր գազահան-ման համար, նրանց մեջ պատրաստում են սառը կրի շփոթ և քլորակրի կաթ:

8) Տակառներ. ծառայում են վորպես ջրի պահեստներ:

9) Լորակի վրձիկներ. պետքական են քլորակրի շփոթով մա-մակերեսները գազահանելու համար:

10) Կացիցներ. կարելի չէ ոգտագործել վորպես հակահը-դեհային ինվենտար, հրդեհը հանգցնելու ժամանակ:

11) Փոք ու մեծ աղկեր. սրանցով կարելի չէ տեղափոխել գազահանման նյութերը (քլորակիրը):

12) Փայսե յեղ մեծադե ձողեր. կարելի չէ ոգտագործել քը-լորակրի կոշտերը մանրացնելու համար և քլորակրի շփոթ ու քլորակրային կաթ պատրաստելու համար:

13) Լինգեր. ոգտագործվում են վորպես հակահրդեհային ին-վենտար:

Բացի դրանից, յուրաքանչյուր բնակմիություն, վորպես ոժանդակ գործիքներ, գազաթափման համար կարելի չէ ունենալ գոգավոր թիակներ, պատգարակներ, վոր կարելի չէ պատրաստել աժան գնով:

Այս ամբողջ գույքը պահվում է առանձին տեղում—բնակ-միության նկուղում կամ մառանում: Ողային տագնապի աղ-դանշանով նկուղը բացվում է և ինքնապաշտպանության խմ-բակի կազմը վերցնում է գույքը:

Գազահանման նյութերը (քլորակիրը) պահվում է գործիք-ներից առանձին: Ինքնապաշտպանության խմբակի հակազազերն ու հակիպրիտային հագուստը մարտիկները պահում են իրենց մոտ:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՎՍՐԱԿՎԱԾ ՈՁԱՆԻՑ ԴՈՒՐՍ ՀԱՆՆԸ:
Վարակման ոջախում ինքնապաշտպանության խմբակի գործո-ղությունները կարող են կապված լինել հետևյալ աշխատանքնե-րի կատարման հետ. 1) գազահանել անցքերը բնակարաններից բնակվողներին դուրս բերելու համար մի անխառն տեղ և ցույց

տալ նրանց բժշկական անհետաձգելի ոգնություն. 2) շղթայել վարակման ոջախը և 3) կանխել խուճապը և գուշքի թալանը սպասարկվող տերրիտորիայում:

Նախ և առաջ ինքնապաշտպանության խմբակը սկսում է դուրս բերել բնակչությանը վարակման ոջախից: Դրա համար խմբակի պետը մարտիկների մի մասին առանձնացնում է անցքերը գազահանելու համար:

Պետի ցույց տված տեղերում նրանք չաղ են տալիս քլորակիր թիերի, բահերի, պատգարակ – մաղերի ոգնությամբ. ընդվորում գազահանումը պետք է սկսել մարդկանց դուրս բերելու տեղից (գլխավոր մուտքից, դարպասի շեմքից) քամու շարժման կողմից վարակման սահմանին ավելի մոտ:

Ժամանակավոր անցքերի լայնությունը կախված է անցնող մարդկանց թվից: Վարակման ոջախից մարդկանց ավելի շուտ դուրս բերելու համար, յեթե բնակչության տերրիտորիայում կա առձեռն շինանյութ (տախտակներ, աղյուսներ և այլն), փռում են տախտակներ կամ աղյուսներ: Այդ տախտակները գազահանման աշխատանքներից հետո պետք է գազահանման յենթարկել քլորակրի շփոթով, իսկ հետո լվալ ջրով:

Բնակչությանը դուրս բերելու համար առանձնացված մարտիկները հազնում են ռետինե կոշիկները և հակազաղերը, յեթե կա իրենց հետ վերցնում են նաև պահուսնի հակազաղերը և գնում բնակչության մոտ:

Բնակիչները, վորոնք պետք է դուրս բերվեն, հազնում են հակազաղերը, հնոտիներով փաթաթում են վոտքերը և հազնում են կրկնակոշիկներ և ինքնապաշտպանության խմբակի մարտիկների ուղեկցությամբ գնում են վորոշված անցքերով անվտանգ տեղը:

Յեթե չկան հակազաղեր, բնակիչները փակ աչքերով, շղթան բռնած, յուրաքանչյուրը մեկ ձեռքով բռնելով պարանից, իսկ մյուսով բերանն ու քիթը ծածկելով թրջած թաշկինակներով, դուրս են գալիս վարակման սահմանից: Խմբակի մարտիկներից մեկը գնում է առջևից, պարանի ծայրից բռնած, մյուսը յետևից:

Դիչերային պայմաններում նույնպես, մարդկանց վարակված ոջախից դուրս բերելու համար, նույնիսկ հակազաղեր հագած, հանձնարարվում է գործադրել պարանը:

Յեթե միջոցներ չկան վոտնամանները վարակումից պահպանելու համար և յեթե վորեն պատճառով ինքնապաշտպանության խմբակը չկարողանա ժամանակին գազահանել անցքերը կամ տախտակներ փռել, այն ժամանակ մարդիկ պետք է վորքան հնարավոր է արագ, շրջանցելով ումբերի պայթած տեղերը, անցնեն վարակված տեղով: Մարտիկները մարդկանց առաջնորդում են, վորքան կարելի յե արագ, շրջանցելով ումբերից պայթած տեղերը, ամենակարճ ճանապարհով, վոր ցույց է տալիս ինքնապաշտպանության խմբակի պետը:

Վարակված տեղերից դուրս բերված մարդիկ խնամքով գազահանում են վոտնամանները քլորակրով, հանում են վերնահագուստը, յեթե վարակված է հեղուկ իպրիտով, դարսում են պարկերի մեջ և ցուցակով ուղարկում են գազահանման կամերան գազահանելու համար: Յուրաքանչյուր առանձին առարկային կապում են տախտակի փոքր կտոր կամ ստվարաթղթի կտոր, վորի վրա գրվում է հագուստը հանձնողի ազգանունն և ինքնապաշտպանության խմբակի համարը: Թե վեր կամերան պետք է ուղարկել վարակված հագուստը, այդ մասին ինքնապաշտպանության խմբակի պետը ցուցում է ստանում ԲՊ ՀՈՊ քաղաքամասի պարետից: Իպրիտով վարակվածներին ուղարկում են խմբակի մարտիկների ուղեկցությամբ առաջին ոգնության կայանը նրանց բժշկական ոգնություն ցույց տալու և վացակայանը սանիտարական մշակման համար:

